Իշխանությունները կարեւորում են ինֆորմացիան առաջինը դաշտ նետելու հանգամանքը, քանի որ այն միշտ շատ ավելի լավ է աշխատում, քան հետո ասված հերքումները: Կարող ես կեղծ ինֆորմացիա տարածել, սակայն երբ հետո հնչում է ճշմարտությունը, այն չի ունենում այն ազդեցությունը, ինչ ունենում է տվյալ կեղծ տեղեկությունը:

Կարդացեք՝ էջ 4

Գաղափարը «փայլուն է», բայց, ինչպես Արամ Զավենիչի բոլոր գաղափարները՝ տափակ ու անիրականանալի: Բանն այն է, որ Արամ Զավենիչն ամեն անգամ, երբ որեւէ հակառուսական բան է մտածում, մոռանում է, որ ինքն էլ Հայաստանի համար վտանգավոր է իր արեւմտյան (ամերիկյան) անսահմանափակ, ես կասեի՝ անմնացորդ կողմնորոշումով:

Կարդացեք՝ էջ 5



Մեկն արդեն նրա կենսագրությունն է հյուսում. «Նոր սահմանադրությունը ծնվել է աննշան գյուղակի աննշան հյուղակում: Նախկինում Ենոքավան էր կոչվում: Հիմա գյուղակը նոր անուն ունի՝ Նիկոլավան, իսկ հյուղակը՝ թանգարանի համբավ: Դեռ ճշգրտված չեն ծնողների կենսագրությունները: Մեծացել է Իջեւանի զով հանդուչելերում»:

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 26 (4161), 25 փետրվար, չորեքշաբթի, 2026

www.hraparak.am

Չնայած Սերժ Սարգսյանի գլխավորած Հանրապետական կուսակցությունը չի շտապում հայտարարել հունիսի 7-ի ընտրություններին մասնակցել-չմասնակցելու իր որոշման մասին, սակայն կուսակցության համագումար են նշանակել՝ ապրիլի սկզբին: Զուգահեռաբար, ՀՀԿ ղեկավար կազմը համայնքներ՝ կուսակցական կառույցներ է ակտիվ այցելում, սակայն այդ այցերը, անհայտ պատճառներով, չեն լուսաբանվում: Մենք տեղեկացանք, որ կուսակցությունը նաեւ նոր՝ երկարաժամկետ ռազմավարություն է մշակում, որը մինչեւ համագումարը պետք է ավարտված լինի եւ ներկայացվի համագումարի մասնակիցներին: Նաեւ ներքին կառուցվածքային փոփոխություններ են իրականացնում: Մի խոսքով՝ ակտիվ կուսակցական աշխատանքների մեջ են: Մինչեւ համագումարը, ըստ ամենայնի՝ մարտի կեսերին, կհայտարարեն ընտրություններին մասնակցել-չմասնակցելու մասին: Եթե մասնակցեն, ապա համագումարի ընթացքում օրենքի պահանջով կհաստատվեն նախընտրական ցուցակի առաջին 30 համարները: Մեր աղբյուրները հաղորդում են, որ այս պահի դրությամբ ով հարցնում է, ասում են, որ վերջնական որոշում չունեն՝ մասնակցել-չմասնակցելու հարցը 50/50 է, սակայն ոմանք վստահ են, որ այս անգամ ՀՀԿ-ն չի մասնակցելու ընտրություններին, բայց փորձելու է աջակցել մյուս ընդդիմադիր քաղաքական ուժերին՝ ԲՊ-ին հաղթելու համար:



Իշխանության ներկայացուցիչները վերջին մեկ շաբաթն օրնիբուն խոսում են հունիսի 7-ի ընտրություններում «Գյումրի 2»՝ ընդդիմադիր ուժերի հետընտրական միավորում թույլ չտալու մասին եւ հատկապես շեշտում են, որ ընդդիմության թեկնածուն լինելու է Ռոբերտ Քոչարյանը: Իշխանական աղբյուրը խոստովանեց, որ հատուկ ծառայությունների ներքին հարցումների արդյունքներով՝ իշխանությունը պարտվում է միասնական ընդդիմությանը, ուստի այլ բան չի մնում, քան բոլորին որպես Ռուսաստանի գործակալ ներկայացնելը եւ «Ռոբերտ Քոչարյան-վարչապետ» բոբոյով վախեցնելը, մանավանդ, որ չկարողացան Սամվել Կարապետյանին նախկինների շարքին դասել: Հույսը մնացել է Ռոբերտ Քոչարյանի հակառեյտինգը, որ մարդիկ իմանան՝ ում էլ ձայն տան, վերջում Քոչարյանն է դառնալու վարչապետ, իսկ նրա վերադարձը հանրության մեծ զանգված չի ուզում, ուստի այդ ենթադրյալ վախից կգնան ու նորից ԲՊ-ին ձայն կտան, ինչպես արեցին 2021-ին: Ի դեպ, պետական ապարատում միլիոնավոր դրամների պարգեւավճարներ բաժանելուց հետո իշխանության ներքին հարցումներն արձանագրել են, որ իրենք վարկանիշի մի քանի նիշ անկում են ունեցել:

Նախընտրական ծուղակներ

Քաղաքական պայքարի մեջ ներքաշված ուժերին բազում ծուղակներ ու թակարդներ են սպասվում: Ամենամեծ ծուղակը պատրանքներն են, իրականությունից կտրված եզրահանգումները, սխալ ենթադրությունների հիման վրա արված քայլերը: Ընդ որում, այդ ծուղակներն իրական են եւ իշխանական ուժերի, եւ ընդդիմադիրների դեպքում: Թիվ մեկ ծուղակը, ըստ իս, հանրության վերաբերմունքը գերագնահատելն է, երբ քաղաքական ուժի ներկայացուցիչները հանդիպում են տարբեր մարդկանց հետ, լսում նրանց քաղաքավարական հաճոյախոսությունները, խաբվում նրանց ժպիտներին ու խրախուսական խոսքերին, եւ ոտքերը կտրվում են գետնից: Իհարկե, մեծ դեր են խաղում նաեւ անմաքուր մարդիկ, որոնք նախընտրական փուլում սովոր են մի քանի դրամ աշխատել եւ հանուն դրա՝ փափուկ բարձ են դնում ընտրություններին մասնակցողների գլխի տակ՝ հավատացնելով, թե նրանք «կրած կունենան» բոլորին, եթե իրենց վստահեն նախընտրական կազմակերպական աշխատանքները: Արդյունքում ընտրությունների գնացող քաղաքական ուժին թվում է, թե իր հազար ձայնն արդեն առնվազն հարյուր հազար է, 1 տոկոսն աչքին 15-20 է երեւում, բծնանքը շփոթում են հիացմունքի հետ, եւ այլեւս ոչինչ ունակ չէ նրանց վերադարձնել իրականություն, համոզել, որ անցողիկ շեմը չեն հաղթահարում կամ միայնակ ունակ չեն 50 տոկոս հավաքել: Մյուս ծուղակը սոցիոլոգիական հարցումներն են, որոնք անձրեւից հետո աճող սնկի նման բազմանում են նախընտրական փուլում եւ քաղաքական ուժերին իրականության սխալ, խեղված պատկեր ներկայացնում: Իհարկե, պատվերն իջեցնող եւ դրա համար վճարող կուսակցությունը լավ գիտի, թե տվյալ հարցումը որքանով է համապատասխանում իրականությանը, բայց ողջ դաշտն ապականվում է, ոչ ոք չի կողմնորոշվում, թե ինչպիսին է իրական պատկերը: Եվ խարխափելով գնում են ընտրության:

Խորհրդարանում առաջիկա նիստի ժամանակ ուժային բլոկի ղեկավարները տարեկան հաշվետվություն են ներկայացնելու: ԲՊ-ում մարտական են տրամադրված՝ նրանց զեկույցների հետ կապված, եւ որոշել են դիտարժան թատրոն բեմադրել՝ փորձելով երկրում տիրող իրավական «բեսպրեդելի», նախկինների «անպատժելիության» եւ մյուս այլ հանցանքների ողջ պատասխանատվությունը դնել այդ կառույցների ղեկավարների ուսերին: Չնայած շատ լավ գիտեն, որ այդ բոլոր կառույցները հլու-հնազանդ կատարում են Նիկոլ Փաշինյանի հրահանգները: Նա եւ գլխավոր դատախազ է, եւ Քննչական կոմիտեի ղեկավար, եւ ՆԳ նախարար, եւ ԱԱԾ տնօրեն: Ինչ վերաբերում է այդ կառույցների գործող ղեկավարներին, ապա ԲՊ-ում հատկապես ներքին հակակրանք ունեն գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի նկատմամբ, եւ հնարավոր է նրա փոփոխության հարցը դրվի:

ՏԻՐԱԴԱՎՆԵՐԻ ՃԱՄԲԱՐՈՒՄ ԱՆԵԼԱՆԵԼԻ ՎԻՃԱԿ Է

Մեր տեղեկություններով, ԱՄՆ Հայոց արեւմտյան թեմի առաջնորդ Տեր Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի ճանապարհով է գնում տիրադավ եպիսկոպոսներից եւս մի քանիսը: Նրանց մեծ մասը զղջացել է եւ հասկացել, որ ճակատագրական սխալ են արել: Բայց հատկապես ողբալի է Արցախի թեմի առաջնորդ Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի վիճակը: Փաշինյանին միանալուց հետո նա այնպիսի հրապարակային պարսավանքի ու ճնշումների ներքո է հայտնվել, որ անգամ դիմել է որոշ արցախցիների եւ նույնիսկ՝ Դադիվանքի վանահայր Տեր Հովհաննես քահանա Հովհաննիսյանին՝ խնդրելով բարեխոսել իր համար, համոզել արցախցիներին, որ ինքը դավաճան չէ, որպեսզի քիչ հալածեն իրեն: Մեր աղբյուրն ասում է, որ Տեր Հովհաննեսը, որը ժամանակին Տեր Վրթանեսի ղեկավարն է եղել, մերժել է նրան՝ ասելով, որ իր արարքն աններելի է, եւ չի կարող իրեն ոչնչով աջակցել: Հայտնի է, որ Արցախի քաղաքական եւ հասարակական շրջանակները դիմել են Վեհափառին՝ թեմական առաջնորդին փոխելու պահանջով: Այս պարագայում խնդիրը գրեթե զավեշտական երանգներ է ստանում, քանի որ սա միակ դեպքն է, որ թեմի առաջնորդին կարգալույծ անելու դեպքում ՀՀ դատական համակարգը նրան չի վերականգնի իր պաշտոնում, որովհետեւ Նիկոլ Փաշինյանը ջնջել է «Արցախ» բառն ու Արցախի բոլոր կառույցները լուծարելու որոշում է կայացրել, ուստի Արցախի թեմի առաջնորդին վերականգնելու ռիսկ չի անի, որ Ալիեւի զայրույթը չհարուցի: Մեր տեղեկություններով, Մայր Աթոռը, գոտեպնդված Եպիսկոպոսաց ժողովի հայտարարությամբ եւ սփյուռքից եկող ազդակներով, շուտով ավելի կոնկրետ քայլերի կգնա:

ԵՐԵՔ ԽՈՇՈՐ ԲԼՈԿՆԵՐԸ ՄԻԱՍԻՆ ԿՍՏԱՆԱՆ 50 ՊԼՅՈՒՍ ՁԱՅՆ

*«Հրապարակի» զրուցակիցը գրող, արձակագիր **Գուրգեն Խանջյանն** է:*



Էջը՝
Հայկ
ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

- Ամիսներ առաջ «Գրեթերթ» գրական-երիտասարդական թերթի ֆինանսավորումը ԿԳՄՍ նախարարությունը դադարեցրեց, ինչպես տարիներ առաջ դադարեցրեց «Մշակութային Հրապարակ»-ի ֆինանսավորումը: Պատճառն ակնհայտ է ինչպես «Հրապարակի» դեպքում, այնպես էլ՝ Ձեր պարագայում. իշխանություններին ուղղված քննադատությունն ու նրանց թերությունները մատնանշելը: Մենք նախորդ իշխանություններին էլ էինք քննադատում, բայց սրանց անհանդուրժողականությունն առասպելական չափերի է հասնում: Իրենք իրենց միլիոնավոր դրամների ինքնապարգեւատրում են բաժանում, իսկ մշակութային կայացած նախաձեռնություններին տարեկան 1 կամ 2 միլիոն չեն տալիս: Չկա՞ նոր բան այս առումով:

- Որեւէ նոր բան չկա, թերթը, հավանաբար, չի տպվի, քանի որ չկան միջոցներ, փնտրում ենք, բայց դե…. կայքը, ամեն դեպքում, աշխատում է: Արդեն ամեն բան պարզ է իշխանությունների մասով, պարզ է, թե ինչու դադարեցրին մեր ֆինանսավորումը:

- Մոտենում են խորհրդարանական ընտրությունները: Ի՞նչ կարծիք ունեք այդ մասին, ինչ սպասելիքներ: Ի դեպ, Եկեղեցու դեմ պայքարը չի հաջողում, բայց նաեւ չի ավարտվում, ավելին՝ հայտարարում են, որ Եկեղեցում կան մանկապիղծներ:

- Եկեղեցու հետ կապված՝ բնական է, որ ամեն գնով իրենց արարքները պետք է արդարացնեն, շատ ամոթալի է…. ինչ վերաբերում է ընտրություններին, ապա սպասելիքս իշխանափոխությունն է: Կարծում եմ, որ եթե ընտրություններն արդար լինեն, այն անպայման կստացվի:

- Իսկ Դուք ո՞ր քաղաքական ուժին եք համակրում:

- Քոչարյանական ուժին՝ «Հայաստան» դաշինքին:

- Ի՞նչ եք կարծում՝ Քոչարյանն այս անգամ ունի՞ հաղթանակի շանս:

- Դե, գիտեք ինչ, Սամվել Կարապետյանի ուժն այս անգամ ավելի մեծ շանսեր ունի, ավելի ուժեղ է, կարծում եմ, որ նրանք ավելի շատ ձայներ կհավաքեն ու ավելի մեծ շանսեր ունեն, ընդհանուր առմամբ, բայց «Հայաստան» դաշինքն էլ մուտքի շեմը կհաղթահարի:

- Բայց արդյո՞ք բավական է մուտքի շեմ հաղթահարելը:

- Երեք խոշոր բլոկները միասին կկազմեն 50 պլյուս: Ես այդպես եմ կարծում: Ռոբերտ Քոչարյան, Սամվել Կարապետյան, Գագիկ Ծառուկյան: Ես կարծում եմ, որ նրանք կկարողանան միասին հաղթել Փաշինյանին, եթե, իհարկե, չհայտնվեն ձայն փոշիացնողներ: Նրանք կարող են իսկապես խանգարել ընդդիմությանը, բայց եթե իրոք իշխանափոխություն են ցանկանում, պետք է ամբիցիաները թողնեն մի կողմ: Օրինակ՝ ես չգիտեմ, թե ՀԱԿ-ն ինչպես է մտածում՝ մենա՞մ է մասնակցելու ընտրություններին, թե՞ ոչ: Պետք է բոլորը թողնեն իրենց ամբիցիաները, եթե ուզում են իշխանափոխության հասնել:

- Երբեւէ կմտածեի՞ք, որ Ռոբերտ Քոչարյանի հետ կարող եք հույսեր կապել:

- Ես նրան երբեք չեմ քննադատել, նա միշտ էլ բոլոր առաջնորդների մեջ ամենահաջողակն է եղել: Ես տեսել եմ, թե ինչպես է նա փոփոխություններ կատարել: Այս երկրում եթե մի թարմ բան կար, դա Քոչարյանի ժամանակ էր: Խավարից ու ցրտից նրա շնորհիվ ազատվեցինք, շինարարությունը ոտքի կանգնեց…. ամեն ինչ եղավ Քոչարյանի օրոք ու նրա շնորհիվ: Նա հաղթեց պատերազմում եւ տնտեսության մեջ: Նրա մասին շատ բամբասանքներ տարածեցին տարիներ շարունակ, ինչ ասես, որ չասեցին, առանց երկար-բարակ մտածելու, եւ այդ ամենն արմատացավ ժողովրդի մեջ: Եթե նա իսկապես այդքան վնաս տված լիներ մեր երկրին, ո՞վ է օրվա իշխանությունից ավելի շատ ցանկանում վնասել նրան, վաղուց նրան պատասխանատվության կենթարկեին: 4 միլիարդի մասին էին խոսում, 4 միլիարդի գոնե 4 միլիոնը գտա՞ն, եթե գտնեին, բոլորս կիմանայինք: Ախր, չի կարելի այդքան հեշտ սեւացնել մարդկանց, անունները, որոնք գործ են արել մեր երկրի կայացման համար: Ինչքան ցավալի է, որ մարդիկ գնացել են կռիվ, հաղթել են ու այսօր անտեսված են:

- Դուք շփվո՞ւմ եք գրողների, մշակութային գործիչների հետ: Բացառությամբ մի քանիսի, ինչո՞ւ են մտավորականներն այդքան վախեցած:

- Չէի ասի, թե վախեցած են: Մի փոքր մասն է վախեցած, մի մասը սպասում է, թե ինչ կլինի ապագայում, կան նաեւ մարդիկ, ովքեր հարում են իշխանական կողմին, չէի ասի, թե նրանք մեծամասնություն են, եւ կան մարդիկ, ովքեր մշտապես խոսում են՝ Լեւոն Ջավախյան, Խաչիկ Մանուկյան, Հուսիկ Արա, դերասան Լեւոն Հարությունյան, ու էլի շատ կան գրողներ, ովքեր չեն լռում:

- Երիտասարդ գրողների հետ շատ եք աշխատել, շատերին էլ Դուք եք օգնել, որպեսզի կայանան, անուն ու ճանաչում ձեռք բերեն: Ճի՞շտ եմ նկատել, որ նրանց մի մասը պրոիշխանական հայացքներ ունի:

- Երիտասարդները, ցավոք, անսկզբունքային դիրքերից են հանդես գալիս, ասում են՝ մենք գործ չունենք ոչ մի բանի հետ, ասում են՝ մենք խաղաղասեր ենք…. Ես ձայն չեմ լսում նրանց կողմից:

- Այսինքն՝ իրենք կարծում են, թե ավագ սերունդը պատերազմատենչ է, իսկ Փաշինյանի իշխանությունը, որ 5 հազար զոհ տվեց ու Արցախ հանձնեց, խաղաղասե՞ր է:

- Մենք պատերազմատենչ չենք, ուղղակի հայրենասեր ենք, ջահելների մեջ էլ կան հայրենասեր տղերք, ուղղակի մարդ կա՝ հրապարակային ակտիվություն կարողանում է ցուցաբերել, մարդ էլ կա՝ չի կարողանում:

- Դե, հավանաբար, շահ ունեն իշխանություններից, պաշտոններ, գրանտներ….

- Օրինակ, մրցանակներ վաղուց չկան, նախագահի մրցանակ, պետական մրցանակ՝ վաղուց հանվել են: Գրականության ասպարեզում վերջին գրական մրցանակ ստացողը ես եմ եղել՝ 2017 թվականին: Դրանից հետո դա էլ վերացավ…

ԿԱՐԳԱԼՈՒՅԾ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻՆ ԹԱՂՄԱՆ ՉԵՆ ԿԱՆՉՈՒՄ, ՊՍԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՉԵՆ ՎՍՏԱՀՈՒՄ



«Հրապարակի» զրուցակիցը **Տեր Վրթանես քահանա Բաղալյանն** է:

- Կիրակի օրը Նիկոլ Փաշինյանը հերթական շրջիկ պատարագին է մասնակցել՝ Սեւան քաղաքի Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցում: Նա այս անգամ պատարագին ներկայացել է աննկատ՝ անակնկալ կերպով, եւ չի հրահանգել զեղչել Վեհափառի անունը, ինչպես նախորդ ֆեյք պատարագների ժամանակ: Պատարագն էլ ընթացել է ըստ կարգի՝ կաթողիկոսի անվան հիշատակումով: Կարծես թե իրավիճակ է փոխվել, ու վերջակետ է դրվում հակաեկեղեցական այս արշավին…. գուցե Փաշինյանը վախենո՞ւմ է ընտրություններին ընդառաջ սադրել մարդկանց, բախումների գնալ, գուցե հասկացե՞լ է, որ այս հարցում չունի հանրային աջակցություն:

- Իրականում, այս հակաեկեղեցական արշավը Փաշինյանին որեւիցե առավելություն չի տալիս, վաղը եթե օրինակի համար նա կաթողիկոսի դեմ ինչ-որ քայլ անի, օրինակ՝ կալանավորի, իր վարկանիշը դրանից ավելի կնվազի: Ի վերջո, նա այդքան օրենքներ է խախտում, սահմանադրություն է շրջանցում, ինչ ասես՝ անում է: Իսկ այդ «պատարագներին» նա շարունակաբար հրամայում էր մարդկանց բերել մարզպետարաններից, դպրոցներից, մանկապարտեզներից եւ այլ պետական կառույցներից, բայց այդպես ինչքա՞ն կարելի է: Հասարակության այդ հատվածը մի օր խոսում է, ինչքան էլ որ լրագրողներից վախենան, լռեն նրանց ներկայությամբ, միեւնույն է՝ մի տեղ պատմում են, ի վերջո՝ այդ ամենը, մեծ հաշվով, ակնհայտ է: Մարդիկ դժգոհում են: Համոզված եմ, որ իշխանությունները հետեւում են հասարակության արձագանքին, կարդում են լրատվամիջոցների նյութերի տակ գրվող մեկնաբանություններն ու հասկանում, որ չեն վայելում հանրության սերն ու վստահությունը: Այս անգամ Նիկոլ Փաշինյանը որոշեց առանց տեղյակ պահելու գնալ եկեղեցի, որպեսզի տեսնի իրական պատկերը: Նա տեսավ, որ եկեղեցին լիքն է: Անիմաստ ծափողջույններ չեղան, Վեհափառի ու առաջնորդի անունները հնչեցին, աղոթք արվեց, ամեն ինչ շատ նորմալ ընթացավ, եւ վարչապետը՝ ինքը, պետք է իրավիճակից դասեր քաղի, առնվազն պետք է այնպես անի, որ Եկեղեցու հետ հարաբերություններն առողջանան, քանի որ Եկեղեցին է ազգային գաղափարախոսության հիմքը: Չի կարող ազգն առանց Եկեղեցու գոյատեւել: Եվրոպայում անգամ հասկացել են, որ առանց հոգեւոր արժեքների չի կարող ճիշտ հասարակություն ձեւավորվել: Պետության եւ Եկեղեցու միջեւ պետք է փոխադարձ հարգանք ու երկխոսություն լինի: Այժմ նրանք ի՞նչ են անում՝ խոնարհվում են Ալիեւի առաջ, այն դեպքում, երբ Բաքվի բանտերում գերիներ ունենք, նման իրավիճակում գնում են Ալիեւի ձեռքը սեղմելու, ճանապարհ են տալիս նրան: Եթե այսպես շարունակվի, այս մարդիկ անգամ խորհրդարանում չեն հայտնվելու, էլ ուր մնաց՝ վերարտադրվեն:

- ԱՄՆ արեւմտյան թեմի առաջնորդ Հովնան սրբազանը, որ միացել էր հակաեկեղեցական արշավին՝ մյուս 9 եպիսկոպոսների հետ, դարձի եկավ եւ վերադարձավ Եկեղեցի, այն դեպքում, երբ մի քանի անգամ կաթողիկոսի դեմ հայտարարություններ էր արել: Ի՞նչ կարծիք ունեք նրա մասին:

- Փառք Աստծո, տիրադավների թիվը պակասել է, ոչ թե՝ ավելացել: Ցավալի է, որ նրանք կան, բայց քիչ են: Նրանք կազմում են չնչին փոքրամասնություն: Եկեղեցու մեծ մասն իր հավատարմությունն է հայտնում առ Աստված, առ Մայր Աթոռ, առ Վեհափառ: Հավանաբար, նրանք արդեն հասկանում են, որ հակաեկեղեցական պայքարն անիմաստ է, որ այդ շարժումը չունի աջակցություն, այն դրսից է թելադրվում եւ հովանավորվում: Այդ արշավը կարող է դեռ երկար շարունակվել, սակայն ոչ առաջվա ագրեսիվ ու ինքնավստահ քայլերով, քանի որ հասարակության կողմից այդ ամենն ունեցավ մեծ հակազդեցություն: Ի վերջո, մեր հասարակության մեծամասնությունը հավատարիմ է Հայ առաքելական եկեղեցուն եւ իր գահակալին, մարդիկ վստահում ու սիրում են իրենց ուխտապահ հոգեւոր հովիվներին: Այսօր տեղեկացա, որ Օհանավան գյուղում Ստեփան Ասատրյանին այլեւս ոչ մի թաղման չեն կանչում, ոչ մի պսակադրություն չեն կատարում նրա ձեռամբ:

- Բայց նա օրեր առաջ մեզ վստահեցնում էր, որ մարդիկ իրեն վստահում ու սիրում են եւ չեն դադարում այցելել իր մոտ:

- Հովհաննավանքում գրեթե պսակներ չեն լինում, հասարակությունը նրանից խորապես հիասթափվել է, եթե առաջ շաբաթը տասնյակ պսակադրության արարողություններ էին լինում Հովհաննավանքում, ապա հիմա անգամ ամսվա մեջ մեկ-երկու պսակադրության արարողություն չի լինում, որն էլ լինում է՝ ուղղորդված է, ձեւի համար են անում, որ, տեսեք՝ պսակ է կատարվում Հովհաննավանքում: Թալինում վերջերս Տեր Հայկը զբաղված էր, ոչ մեկը չցանկացավ, որ կարգալույծ Տեր Արամայիսը որեւէ գործողություն կատարի, եւ դա՝ այն դեպքում, երբ նրան մարդիկ սիրում էին, լավ հարաբերություններ ունեին հետը: Օրինակ՝ հանգուցյալի երեխաները պնդել էին, որ իրենց հոր հուղարկավորությունը չկատարվի կարգալույծ քահանայի կողմից, մարդիկ ինձ եկան, Բյուրականից տարան մինչեւ Թալին…. հասարակությունը հասկանում է, թե ինչ է կատարվում: Ֆեյսբուքում գուցե մի քանիսը տպավորություն են ստեղծում, թե տիրադավներն ունեն աջակցություն, բայց իրական կյանքում նրանց ոչ մեկը չի ընդունում:

եթե հանցանք կատարած լիներ, կասեր՝ այդ տեսանյութում ես չեմ

Մոտ 2 շաբաթ առաջ Մասիսի քաղաքապետ Դավիթ Համբարձումյանի գործով նիստից անմիջապես հետո, հենց դատարանի բակից ձերբակալեցին նրա եղբորը՝ Գոռ Համբարձումյանին, որը Դավիթ Համբարձումյանի գործով եւս մեղադրյալ է:

Այդ ժամանակ Քննչական կոմիտեից մեզ փոխանցել էին հետեւյալը. «Քրեական վարույթի նախաքննության ընթացքում Գ. Հ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 204-րդ հոդվածի 1-ին մասով (անձնական կամ ընտանեկան կյանքի գաղտնիությունը խախտելը), 457-րդ հոդվածի 2-րդ մասով (փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր կեղծելը կամ կեղծ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր իրացնելը, պատրաստելը կամ օգտագործելը), 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (առանձնապես խոշոր չափերով խարդախությունը) եւ 296-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (առանձնապես խոշոր չափերով փողերի լվացումը): Վերջինս ձերբակալվել է»:

«Հրապարակ»-ի տեղեկություններով՝ Քննչական կոմիտեն 10 օրում ափալ-թափալ գործը քննել, ավարտել է, հայտարարել է նախաքննության ավարտ եւ ուղարկել հսկող դատախազին, վերջինս էլ հաստատել է Համբարձումյանի մեղադրականը: Գործով, բացի Գոռ Համբարձումյանից, անցնում է նաեւ 5 անձ, որոնց բոլորի նկատմամբ, բացի մեկից, կիրառվել է խափանման միջոց կալանավորում:

Համբարձումյանի պաշտպան **Գայանե Պապոյանը** մեզ հետ զրույցում հաստատեց այս տեղեկությունը՝ նշելով, որ առաջին ատյանի դատարանն արձանագրել է՝ «հիմնավոր կասկածն ամրապնդման կարիք ունի»: Այնուամենայնիվ, դատարանը նրան կալանավորել է «փողերի լվացման» դրվագով: «4 հոդվածով էր մեղադրանք առաջադրվել, 3-ով դատարանն արձանագրել է հիմնավոր կասկածի բացակայությունը, իսկ 4-րդը, որը փողերի լվացումն է, այսինքն՝ իր քարտին գումար է նստել, մենք դա հստակ ներկայացրել ենք, թե ինչ գումար է, դատարանը ցիտել է, որ այդ մասով պետք է հստակ քննություն արվի, որպեսզի ստուգվի՝ Գոռ Համբարձումյանի ներկայացրած փաստարկն իրականությանը համապատասխանո՞ւմ է, թե՞ ոչ, ու վերջ: 3 հոդվածով արձանագրվել էր հիմնավոր կասկածի բացակայությունը, բայց իրենք նախաքննության ավարտ են հայտարարել: Ամբողջությամբ անհիմն եւ ապօրինի է»:

Պապոյանի խոսքով՝ այդ 4-րդ դրվագով ահա թե խոսքն ինչի մասին է. Համբարձումյանի հաշվին «նստել է» 2 միլիոն 413 հազար դրամ, որը բանկոմատներից մեկից կանխիկացրել է եւ, ըստ էության, հայտնվել այս պատմության մեջ. «Իրեն պարտք են եղել, փոխանցել են այդ գումարը, տրամաբանորեն, ինքը չի կարող իմանալ՝ այդ անձնավորությունը, որը փոխանցել է գումարը, որտեղից նրան: Բանկոմատի տեսանյութն են վերցրել, որ գումարը կանխիկացնում է, մինչեւ Գոռ Համբարձումյանին կանչելը, այլ մարդկանց կանչել են, ասել են՝ ճանաչո՞ւմ եք այս մարդուն, որը կանխիկացում է կատարում, ասել են՝ չէ, չենք ճանաչում, կանչել են Գոռ Համբարձումյանին, ասել են՝ ճանաչո՞ւմ եք այս մարդուն, ասում է՝ իհարկե, ես եմ: Այսինքն՝ մարդը եթե ուզենար հանցավոր սխեմա գծել, նախ չէր ուզենա, որ իր հաշվին նստեր գումարը, եւ չէր գնա, նախաքննական մարմնին ասեր՝ ես եմ, երբ տեսանյութը շատ վատ որակի է: Նախաքննական մարմինը չի կարողացել պարզել, Մասիսից տարբեր մարդկանց են կանչել, այդ թվում՝ Գոռ Համբարձումյանին ճանաչող մարդկանց, բայց ոչ մեկը չի ճանաչել, որովհետեւ շատ վատ որակի տեսանյութ է: Ասում են՝ քանի որ դու կանխիկացրել ես այդ գումարը, դու ես այս ամենը կազմակերպել»:

ՈՒՂԻՂ ԽՈՍՔ

ՄԵՆՔ ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ ՑԱՆԿԱՑԱԾ ՍՑԵՆԱՐԻ, ԲԱՅՑ ԵԹԵ ՆՄԱՆ ԲԱՆ ԱՆԵՆ, ՉԵՆ ՄԱՐՍԻ

Զրուցեցինք «Ուժեղ Հայաստան» քաղաքական ուժի խորհրդի անդամ, ՀԷՑ նախկին գլխավոր տնօրեն **Դավիթ Ղազինյանի** հետ

- «Հանրապետություն» կուսակցության նախագահ Արամ Սարգսյանը հարցազրույց է տվել իշխանական կայքին եւ ասել, որ Սամվել Կարապետյանի գլխավորած ուժին Կենտրոնական ընտրական հանձնաժողովը չպետք է գրանցի ու թույլ չպետք է տա մասնակցել ընտրություններին՝ այնպես, ինչպես Մոլդովայում արեցին: Իբր դրսից ուղղորդվելու ու ֆինանսավորվելու հանգամանքն է: Նախ՝ որքանո՞վ է այս պնդումն իրականությանը մոտ, եւ հնարավոր համարո՞ւմ եք, որ ձեզ թույլ չտան մասնակցել ընտրություններին:

- Ճիշտն ասած, ասելիք չկա, եթե Արամ Սարգսյանը պետք է որոշի՝ ով պետք է մասնակցի, ով՝ ոչ: Ինչ վերաբերում է իրավական ընթացակարգերին, ես ամենայն պատասխանատվությամբ հայտարարում եմ՝ նման բան գոյություն չունի: Եթե այդ ամենը հորինովի ու սարքովի չէ, որեւիցե նախադրյալ, որեւիցե հիմք գոյություն չունի, որով կարելի է արգելել մեր կուսակցության մասնակցությունը:

- Հաշվի առնելով, թե ով է Արամ Զավենիչը, արդյո՞ք նա չի բարձրաձայնում իշխանության ներսի տրամադրությունները, այսպես ասած՝ թեման դնում է շրջանառության մեջ, որ զոնդաժ անեն... որեւէ բան բացառել պետք չէ:

- Միանշանակ՝ այդպես է, ինքն արտահայտում է իշխանությունների ցանկությունը: Ինֆորմացիան գցել է դաշտ եւ, հավանաբար, սպասում է արձագանքների: Դա հին, փորձված մեթոդ է, բայց այլեւս՝ չաշխատող: Կարծում եմ՝ նույն հաջողությամբ մենք էլ կարող ենք շատ այլ փաստարկներ բերել, որ իրենց ուժը չպետք է մասնակցի, ե՞ւ... որեւէ կուսակցությո՞ւն է որոշում՝ որ ուժը պետք է մասնակցի, որը՝ ոչ: Սա իրականում իրենց վախերի դրսեւորումն է: Որքան մեր ճանաչելիությունը, որպես կուսակցության, մեծանում է, մեր վարկանիշը՝ մեծանում, մեր ղեկավարի ուժը՝ ընդգծվում, շարունակվում, այնքան իրենց վախերը շատանում են: Ի վերջո, իրենց ամենօրյա ռեժիմով հատուկ ծառայությունները զեկուցում են իրավիճակի մասին, եւ վստահեցնում եմ՝ օր-օրի ավելի է վիճակները սրվելու: Մենք պատրաստ ենք, չենք վախենում:

- Իշխանությունը թքած ունի օրենքի, օրինականության վրա եւ կարող է ցանկացած քայլի գնալ՝ տեսնելով ձեր վարկանիշը. ունե՞ք արդյոք հակաքայլեր, այլընտրանք՝ ընտրություններին մասնակցելու ձեւաչափի հարցում:

- Մենք բոլոր սցենարներին պատրաստ ենք, թույլ տվեք փակագծեր չբացել, այնպես չէ, որ չենք նախատեսում կամ կանխատեսում նման քայլեր: Պարզապես իմ անձնական կարծիքն է, որ բացառում եմ, քանի որ դա շատ մեծ ռիսկ է. Մոլդովան այլ խնդիր է, Հայաստանը՝ այլ: Չեն մարսի, հաստատ, եւ իրենք էլ գիտեն, որ մենք այս պահի դրությամբ առաջին ընդդիմադիր ուժն ենք, ու առաջին ուժին թույլ չտալ մասնակցել՝ մի քիչ ճոխություն կլինի անգամ իրենց համար՝ այն առումով, որ չենք կարող իրենց թույլ տալ: Բնականաբար, սահմանադրական ճանապարհով հակազդելու մասին եմ խոսում, ոչ թե սպառնալիքներ եմ հնչեցնում, ու չփորձեն շահարկել:

- Փողոցային պայքարի՞ դուրս կգաք, թե՞ այլ ուժով կառաջադրվեք, ի՞նչ կանեք:

- Որեւիցե բան չբացառելով՝ մենք ունենք մեր սցենարները: Իրենք ինչ մտածում են՝ ինչ կարելի է անել, մենք դրա հակաքայլն արդեն ունենք:

- Իշխանականները նաեւ համառորեն առաջ են տանում այն թեզը, որ ընդդիմադիրները «Գյումրի 2» են ծրագրել, շեշտում են, որ եթե ձեր ուժն ամենաշատ ձայները հավաքի, վարչապետի թեկնածուն լինելու է Ռոբերտ Քոչարյանը, աջակցելու եք նրան: Քոչարյանով փորձում են վախեցնել ժողովրդին՝ իմանալով, որ հանրության որոշ խմբեր նրան չեն ընդունում:

- Նման հայտարարություններ անողներին խորհուրդ եմ տալիս դիմել համապատասխան մասնագետի՝ բժշկի, ես բացառում եմ դա՝ որպես կուսակցության խորհրդի անդամ: Մենք հաստատ 50+ ենք հավաքելու, եթե անգամ չհավաքենք էլ, բացառում եմ մեր ձայները Քոչարյանին կամ որեւէ մեկին տալը:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

Ե՛Վ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆՆ Է ԲՈՂՈՔԵԼ, Ե՛Վ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆԸ

Հակակոռուպցիոն դատարանը՝ դատավոր Սարգիս Դադոյանի նախագահությամբ, 2025 թվականի հունվարի 29-ին հրապարակեց Վանաձորի նախկին քաղաքապետ Մամիկոն Ասլանյանի գործով մեղադրական դատավճիռը, որով նրան մեղավոր ճանաչեց պաշտոնեական լիազորություններն անցնելու ու պաշտոնեական կեղծիքի հոդվածներով եւ որպես վերջնական պատիժ՝ նշանակեց 4 տարի 4 ամիս ժամկետով ազատազրկում, տուգանք՝ 500 հազար դրամ, եւ 3 տարով հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկեց: Այսինքն՝ մոտ 3 տարի ազատազրկում կրած Ասլանյանը, որի նկատմամբ քաղաքական հետապնդում էր իրականացվում՝ ընտրություններում հաղթելու համար, դեռ 1 տարի 9 ամիս էլ պետք է նստի, եթե այս դատավճիռն ուժի մեջ մտնի: Նման դաժան ու անարդար դատավճիռը շատերին զարմացրեց, եւ հասկանալի դարձավ, որ Ասլանյանի խափանման միջոցը փոխած եւ կալանքից ազատ արձակած դատավորն իր համար «ստրախովկա» էր արել՝ ազատում եմ, բայց խիստ դատավճիռ եմ արձակում, որ ինձ իշխանությունը չհոշոտի, չմեղադրի ընդդիմությանն աջակցելու մեջ: Ասլանյանն այժմ ազատության մեջ է՝ դեռ վերաքննիչ ու վճռաբեկ դատարանները պետք է քննեն գործը: Առաջին ատյանի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել ե՛ւ պաշտպանական կողմը, ե՛ւ դատախազությունը, որը, չգիտես ինչու, համաձայն չէ առաջին ատյանի դատարանի այս խիստ որոշմանը: Ասլանյանի պաշտպան **Արտակ Ոսկանյանը** «Հրապարակ»-ի հետ զրույցում նշեց՝ բողոքի քննությունը վերաքննիչում բանավոր կարգով տեղի է ունենում, բայց ինքը չգիտի, թե երբ կլինի որոշումը:

Զրուցեցինք նաեւ **Մամիկոն Ասլանյանի** հետ: Նա ասաց, որ Վերաքննիչ դատարանում միջնորդություններն են քննում. «Մեր միջնորդություններից մեկը բավարարվել է, այն վերաբերում էր նրան, որ քննիչի կողմից զննության արձանագրությունները կասկածներ են հարուցել, միջնորդել ենք, որ ընթերականները գան վկայի կարգավիճակով, որ լսենք: Եկել են, լսել ենք, դա բավարարվել է: Ընդհանուր կարծում եմ՝ օբյեկտիվ է ընթանում այս պահին, հավատում եմ, որ արդարադատությունը պետք է հաղթանակի»: Վերաքննիչում գործը քննում է դատավոր Մեսրոպ Մակյանը: Հիշեցնենք, որ այս քրգործով անցնող մյուս ամբաստանյալը՝ Սուրեն Աբովյանը, մեղավոր էր ճանաչվել առաջադրված մեղադրանքներում, հոդվածների մի մասով ազատվել է պատասխանատվությունից, մյուս մասով՝ դատապարտվել ազատազրկման եւ տուգանքի: Դատարանը որպես վերջնական պատիժ էր սահմանել 2 տարի ժամկետով ազատազրկումը, տուգանք՝ 400 հազար դրամ, 3 տարի ժամկետով զրկել հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելուց: Արեւիատ Հովհաննիսյանը մեղավոր էր ճանաչվել եւ տուգանվել 500 հազար դրամի չափով:

Նյութերը՝ Աննա ՊԱՊԻԿՅԱՆԻ

ԿԱՐԾԻՔ

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆՆ ԱՄԵՆԱՇԱՏԸ ՆՅԱՐԴԱՅՆԱՑՆՈՒՄ Է, ՈՐ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ԴԱՇՏՈՒՄ ԻՐԵՆՔ ՊԱՐՏՎՈՒՄ ԵՆ

ՔՊ-ական իշխանությունը շարունակ կեղծ օրակարգեր է ստեղծում՝ հիմնականում թիրախավորելով ընդդիմությանը եւ Եկեղեցուն: Ասենք, ընդդիմադիր որեւէ գործչի մի հայտարարություն, լեզվի անզգույշ սայթաքում, որեւէ անկարեւոր վրիպակ կարող են պատրվակ դառնալ, որ ՔՊ-ի «ստատուսչիները» կազմակերպված գործի անցնեն, ֆեյքերը հարյուրավոր մեկնաբանություններով տպավորություն ստեղծեն, թե «աշխարհը շրջվել է», եւ դա արվում է ընդդիմությանը վարկաբեկելու, նրա հանրային վստահության մակարդակը նվազեցնելու նպատակով: Ակնհայտ է, որ Նիկոլ Փաշինյանին ու իր թիմին ո՛չ երկրի անվտանգությունն է հետաքրքրում, ո՛չ տնտեսական վիճակը, ո՛չ հայ ռազմագերիները, որոնք Բաքվում խոշտանգվում են, փոխարենը՝ խիստ մտահոգված են Սամվել Կարապետյանի աճող վարկանիշով եւ մեծ աղմուկ են բարձրացրել, որ նրա ինչ-որ թիմակից Գյումրին գյուղ է անվանել, կամ Կարապետյանի որդին կանանց բավարարվածության եւ սեքսի նախարարություն ստեղծելու թեմայով կատակներ է արել եթերում:

Քաղտեխնոլոգ **Վիգեն Հակոբյանին** «Հրապարակը» հարցրեց՝ ինչո՞ւ են իշխանությունները մանրուքները, ինչպես ժողովուրդն է ասում՝ «լուն ուղտ դարձնում», իսկ բովանդակային հարցերի, լուրջ թեմաների շուրջ՝ ոչ մի բանավեճ ու քննարկում:

«Օրինակ՝ «Ուժեղ Հայաստան» կուսակցությունն առաջարկում է տնտեսական հինգ կետ, առաջարկում է քննարկումներ դրա շուրջ, իսկ դու այդ ամենի շուրջ արգումենտներ չես կարողանում դնել, ապա պետք է փորձես շեղել հանրությանն ինչ-որ թեմաների շուրջ, որոնք կենցաղային են, պարզունակ, զգացմունքային, միեւնույն ժամանակ՝ չունեն որեւիցե էական նշանակություն ու ասելիք: Ընդհանրապես, օրվա իշխանությունների մարտավարությունը շատ պարզ է, փորձում են նման թեմաներով օրակարգ լցնել եւ դրանք փորձում են դարձնել մամուլի օրվա թոփ վերնագիր: Նրանց համար նշանակություն չունի՝ այդ ամենը դրական է ընկալվում, թե՛ բացասական, այն ծիծաղելի՞ է, թե՛ տխուր, նրանց համար էականն այն է, որ իրենց լցրած օրակարգով սպիտակ աղմուկ ստեղծեն: Սպիտակ աղմուկով փորձում են այնպես անել, որպեսզի որեւէ մեկի խոսքը, ասելիքը չլսելի չդառնա, փոխարենը՝ իրենց ասելիքը դառնա օրվա թրենդը: Սա է խնդիրը, եւ հենց դա է պատճառը, որ վերցնում են աննշան, աննշանակալից թեմաները, այդ թվում՝ կոնտեքստից կտրված: Խոսեցիք սեքսի նախարարության մասին: Իշխանություններն այնքան պրոպագանդեցին դա, որ ես ստիպված նստեցի եւ դիտեցի, պարզվեց՝ Սարգիս Կարապետյանն անգամ նման բան չի էլ ասել: Փոթքաստի ժամանակ է նման միտք հնչել, եւ ինքն ուղղակի շարունակել է այն: Նույն՝ Գյումրիի հետ կապված եւս՝ վրիպումը կտրում են կոնտեքստից եւ շեշտադրումներ անում: Իրականում, այս ամենը նաեւ ցույց է տալիս, որ նախընտրական կոմպանիան լինելու է թեժ, այդ թվում՝ օգտագործվելու են տարբեր տեխնոլոգիաներ՝ կապված էլեմենտար մոնտաժի հետ: Կոնտեքստից մի բան կտրում ես, մի հատ էլ արհեստական բանականության շնորհիվ մի բան ավելացնում, ու ամեն ինչ իր տեղն է ընկնում: Իշխանությունները կարեւորում են ինֆորմացիան առաջինը դաշտ նետելու հանգամանքը, քանի որ այն միշտ շատ ավելի լավ է աշխատում, քան հետո ասված հերքումները: Կարող ես կեղծ ինֆորմացիա տարածել, սակայն երբ հետո հնչում է ճշմարտությունը, այն չի ունենում այն ազդեցությունը, ինչ ունենում է տվյալ կեղծ տեղեկությունը: Նրանք խաղում են մարդկանց զգացմունքների վրա: Մի ժամանակ կանանց իրավունքների վրա էին խաղում, հիմա՝ գյումրեցիների էմոցիաների հետ, բայց այս ամենը ցույց է տալիս, որ պետք է զգույշ գործել, որպեսզի շանս չտաս այս մարդկանց, որ անգամ կոնտեքստից քո խոսքը կտրեն: Այս մարդկանց բովանդակային հետաքրքիր չէ, որտեղ կա բովանդակություն, այնտեղ Փաշինյանը պարտված է: Ինչու. որովհետեւ իշխանությունը, ի տարբերություն ընդդիմության, խոստումներ տալու, ծրագրեր ներկայացնելու համար չէ: Իշխանությունը հաշվետվություն ներկայացնողի դերում է, այլ ոչ թե նորից մի քանի տարի ժամանակ խնդրողի: Նման բան կարող է անել ընդդիմությունը: Օրինակ՝ նույն ընդդիմադիրները խոսում են 300 հազար աշխատատեղ ստեղծելու մասին, դեղորայքի գները մատչելի դարձնելու մասին եւ այլն: Իշխանությունը պետք է խոսի, թե այս 8 տարիների ընթացքում ինչ է արել: Էկոնոմիկայի նախարարը խոսում է ՀՆԱ-ի բարձրացման մասին, սակայն տնտեսագետներն անմիջապես արձագանքում են, որ դա ուկրաինական պատերազմի արդյունքն է: Իշխանություններին ամենաշատը նյարդայնացնում է, որ քարոզչական դաշտում իրենք պարտվում են: Սովոր են, որ պետք է միշտ լինեն առջեւում, սակայն այժմ նրանք ստվերված են, ինչը շատ ծանր են տանում»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Իսկ Աննա Հակոբյանի հիմնադրա՞մը

Ընտրությունների օրը նշանակվելուց հետո ուժի մեջ է մտել բարեգործության հետ կապված արգելքը, ինչն արդեն քննարկումների առարկա է դարձել քաղաքական դաշտում: Բարեգործական հիմնադրամներ ունեցող քաղաքական ուժերը վտանգի ներքո են: Բայց ահազանգեր են հնչում, որ այս արգելքը պետք է տարածվի նաեւ իշխանությունների հետ փոխկապակցված հիմնադրամների, մասնավորապես՝ վարչապետի կնոջ կողմից կառավարվող «Իմ քայլը» հիմնադրամի գործողությունների, ի մասնավորի՝ անգլերենի դասընթացների եւ այլ ուսումնական ծրագրերի, ճամփորդությունների եւ այլ առաջարկների վրա: Հակակոռուպցիոն կոմիտեից դեռ որեւէ պաշտոնական արձագանք չի եղել: Երեկ ճեպազրույցի ընթացքում անդրադառնալով այս թեմային՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Արթուր Նահապետյանը նշել է, որ չի ցանկանում այս պահին որեւէ կոնկրետ դեպքի մասին իրավական գնահատական տալ, որպեսզի հետագայում իր խոսքը չկանխորոշի որեւէ իրավական ընթացք: Նա հիշեցրել է, որ Քրեական օրենսգրքի 221 հոդվածը սահմանում է բարեգործության արգելքի խախտման համար պատասխանատվություն՝ ընդգծելով, որ օրենքում հստակ նշված են եւ կիրառման եղանակները, եւ սուբյեկտները, որոնք կարող են հանցակազմի պատասխանատվություն կրել: Վերջում հավելել է, որ կոմիտեին Հակոբյանի հիմնադրամի վերաբերյալ ներկայում նման հաղորդում չի հասել:

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՐԵԼ Է ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՊՕՐԻՆԻ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ

2025թ. մարտից Բերդ քաղաքի ձեռնոցի գործարանը հարկադիր պարապուրդի մեջ է, քաղաքի եւ նույն համայնքի ավելի քան 200 աշխատող զրկվել են հանապազօրյա եկամտից: 2018թ. օգոստոսի 10-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանը Բերդում «Տավուշ տեքստիլ» ընկերության Բերդի ձեռնոցի գործարան էր այցելել, ձեռնարկության գործունեության մասին երկար զրուցել Մոսկվայում բնակվող սեփականատեր Սուրեն Երիցյանի հետ: Ծնունդով Արծվաբերդ գյուղից, Ռուսաստանում գործարարությամբ զբաղվող Սուրեն Երիցյանը, բացի Բերդ քաղաքից, ձեռնոցի գործարաններ է ստեղծել, գործարկել Բերդ համայնքի սահմանամերձ Արծվաբերդ, Մովսես, Չորաթան, Պառավաքար գյուղերում: Սակայն ընկերության Բերդի, Արծվաբերդի, Մովսեսի գործարանները չեն գործում: Լրատվամիջոցները նախկինում նշում էին, որ այդ գործարանների աշխատանքով Բերդի սահմանագոտում 1500 աշխատատեղ է ստեղծվել:

2025թ. նոյեմբերի 19-ին զանգահարեցի Բերդի ձեռնոցի գործարանի տնօրեն Միքայել Եզեկյանին: Նա ասաց, որ տեղի ձեռնոցի գործարանը կսկսի աշխատել, խնդիրների լուծման ընթացքի մեջ է, սակայն գործարանի վերագործարկման որոշակի ժամկետ չնշեց: Ոչինչ չասաց նաեւ գործարանի չաշխատելու պատճառների մասին: «Տավուշ տեքստիլ» ՍՊԸ-ի ձեռնոցի գործարաններում բանվորներն աշխատում են օրական 12 ժամ՝ 20-30 րոպե ընդմիջումով, գիշերային հերթափոխի աշխատողները հավելյալ չեն վարձատրվում, աշխատավարձը բարձր չէ: Բայց սահմանագոտու բնակիչները հարկադրված համաձայնում են այդ պայմաններին, որովհետեւ չհամաձայնելու այլընտրանքը գործազրկությունն է:

2026թ. փետրվարի 12-ին Բերդ համայնքի ղեկավար Աստղիկ Հակոբյանը որոշել է Բերդի Տավուշեցու փողոց, 2 հասցեում գտնվող, «Տավուշ տեքստիլ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնակամ իրականացված 1320.34 քմ ընդհանուր մակերեսով արտաքին չափերով եւ 1265.81 քմ ընդհանուր մակերեսով ներքին չափերով շինությունները ճանաչել օրինական, այդ թվում՝ արտադրական նշանակության շինություններ՝ պահակատուն, կաթսայատուն, ծածկ եւ պահեստներ, որի դիմաց «Տավուշ տեքստիլ» ՍՊԸ-ն տեղական բյուջե պետք է մուծի 2 միլիոն 816 հազար 216 ՀՀ դրամ՝ պահակատան, կաթսայատան, ծածկի եւ պահեստների համար: Նույն օրը Բերդի համայնքապետ Աստղիկ Հակոբյանը մեկ այլ որոշում է ընդունել, որով Բերդ համայնքի Չորաթան գյուղի 3-րդ փողոց, 10 հասցեում գտնվող, «Տավուշ տեքստիլ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնակամ իրականացված 48.55 քմ մակերեսով արտաքին չափերով եւ 45.56 քմ մակերեսով ներքին չափերով շինությունը ճանաչել է օրինական՝ որպես արտադրական նշանակության շինություն՝ պահեստ, պարտավորեցրել է «Տավուշ տեքստիլ» ՍՊԸ-ին՝ տեղական բյուջե մուծել 39 հազար 35 դրամ:

Փետրվարի 20-ին զանգահարեցի **Միքայել Եզեկյանին**, որը հայտնեց, որ շուրջ 10 տարի զբաղեցնելով «Տավուշ տեքստիլ» ՍՊԸ-ի տնօրենի պաշտոնը՝ 2025-ի նոյեմբերին, իր դիմումի համաձայն, աշխատանքից ազատվել է, որովհետեւ աշխատանքի ավելի լավ առաջարկ է ունեցել, որն ընդունել է: Մ. Եզեկյանին հարցրի՝ ճի՞շտ է, որ «Տավուշ տեքստիլ» ՍՊԸ-ի ձեռնոցի գործարանների աշխատողները կենսաթոշակի անցնելիս խնդիրներ են ունենում, քանի որ ընկերության տնօրինությունը չի վճարել աշխատակիցների սոցիալական վճարները: Մ. Եզեկյանն ասաց, որ նման բան չկա:

Բերդի համայնքապետարանի աշխատակազմի հողաշինության, գյուղատնտեսության, անշարժ գույքի կառավարման բաժնի պետ Վաղարշակ Գրիգորյանը ճիշտ է համարում, որ «Տավուշ տեքստիլ» ընկերության ապօրինի կառույցներն օրինականացվում են, մտնում են հարկային դաշտ: Նա հավելեց, որ, օրինականացնելուց զատ, համայնքապետարանի կողմից տույժ է նախատեսված «Տավուշ տեքստիլ» ՍՊԸ-ի կողմից Բերդ քաղաքի Տավուշեցու փողոցում ինքնակամ շինարարության համար: Հավելեմ, որ «Տավուշ տեքստիլ» ՍՊԸ-ի ձեռնոցի գործարանների նոր տնօրեն է նշանակվել Բերդ համայնքի Վերին Կարմիրաղբյուր գյուղի բնակիչ Հրաչ Օհանյանը, որը նախկինում նույն ընկերության Արծվաբերդի ձեռնոցի գործարանը ղեկավարելու անհաջող փորձ ունի:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՍԻՊԻԿ

Արամ Զավենի Սարգսյանը ՔՊ-ի հաղթանակի համար հետաքրքիր սցենար է շրջանառում: Որտեղ նստում՝ խոսում է այն մասին, որ ԿԸՀ-ն պետք է արգելափակի Սամվել Կարապետյանի «Ուժեղ Հայաստան» կուսակցության մասնակցությունն ԱԺ ընտրություններին: Նաեւ մի այդպիսի նախադեպի մասին է պատմում, թե բա՝ Մոլդովայում, այսպես ու այսպես, ռուսական կողմնորոշում ունեցող ուժին արգելեցին մասնակցել ընտրություններին: Ինքը՝ Արամ Զավենիչը, «Ուժեղ Հայաստանին» ընտրություններից դուրս թողնելու «իր պահանջը» բացատրում է Հայաստանի վրա Ռուսաստանի ազդեցության թուլացման անհրաժեշտությամբ, բայց եւ ընդունում է, որ այդ ուժը հետեւորդների (ՀՀ քաղաքացիների) մեծ բանակ ունի Հայաստանում՝ ընդհուպ մի քանի հարյուր հազար: Եվ հարց է առաջանում՝ ինչ են անելու այդ հարյուր հազարավոր ընտրողները, ինչպե՞ս են իրացնելու ընտրելու իրենց իրավունքը, եթե ԿԸՀ-ն Արամ Զավենիչի «խնդրանքով» ու Նիկոլի կարգադրությամբ որոշի արգելել «Ուժեղ Հայաստանի» մասնակցությունն ընտրություններին:

Արամ Զավենիչի հաշվարկը որքան չոր, նույնքան էլ պարզունակ է… Կարծում եմ՝ նա այսպես է մտածում. «Ուժեղ Հայաստանի» հարյուր հազարավոր կողմնակիցները դուրս կգան փողոց, կշրջափակեն ԿԸՀ-ն, գործող վարչապետը ոստիկաններին կուղարկի դեպքի վայր, որ մարդկանց ծեծեն, բերման ենթարկեն, կալանավորեն, լցնեն բանտերը: Սրանից օգտվելով էլ՝ ՔՊ-ն ու ինքը, ինչպես 2021 թվին արին, կկարողանան վերարտադրվել: Գաղափարը «փայլուն է», իհարկե, բայց, ինչպես Արամ Զավենիչի բոլոր գաղափարները՝ տափակ ու անիրականանալի: Բանն այն է, որ Արամ Զավենիչն ամեն անգամ, երբ որեւէ հակառուսական բան է մտածում, մոռանում է, որ ինքն էլ Հայաստանի համար վտանգավոր է իր արեւմտյան (ամերիկյան) անսահմանափակ, ես կասեի՝ անմնացորդ կողմնորոշումով: Եթե ռուսական կողմնորոշումը վտանգավոր է, ապա վտանգավոր է նաեւ արեւմտյան (մեր դեպքում՝ ամերիկաթուրքական) կողմնորոշումը… Այդպես չէ՞:

Եթե հետեւենք Զավենիչի «փայլուն» եւ միեւնույն ժամանակ տափակ գաղափարին, ապա Չինաստանի ԿԸՀ-ն պետք է մոտ մեկ միլիարդ մարդու արգելի՝ քվե տալ երկրի միակ կուսակցությանը, որովհետեւ վերջինս լավ հարաբերություններ ունի Ռուսաստանի հետ եւ «հակամարտության» մեջ է արեւմտյան ուղղություն դավանող Թայվանի հետ: Իսկ ի՞նչ անել մոտ 2 միլիարդ հնդիկներին, հարյուր միլիոնավոր արաբներին, որոնք առանձնապես հիացած չեն, այսպես կոչված, արեւմտյան կողմնորոշում ունեցող «քաղաքական ուժերով»: Ուկրաինայում, որպեսզի հաղթի Զելենսկին, ի՞նչ անեն, Արամ Զավենիչ, արգելե՞ն ռուսական կողմնորոշում ունեցող ուժերի մասնակցությունը երկար սպասված ընտրություններին: Բայց Զելենսկին մի քիչ ավելի խելացի է, քան Զավենիչը, հասկանում է, որ այդ սցենարն իր ավարտը կնշանակի:

Այսուհանդերձ տարօրինակ է, որ Արեւմուտքի եւ Ռուսաստանի միջեւ չկողմնորոշվող ՀՀ իշխանությունները հենց Արամ Զավենիչին են հրահանգել գնալ CIVIC եւ բզբզել մոլդովական սցենարը, այն է՝ ինչ-ինչ օրենքներ մատնանշելով՝ հասկացնել «Ուժեղ Հայաստանին», որ դուրս կմնա ընտրապայքարից, եթե «շատ համը հանի»: Ինչո՞ւ ՔՊ-ի ռահվիրան անձամբ չի խոսում այս մասին: Ահավասիկ, Արամ Զավենիչը CIVIC-ի եթերում բաներ է ասում, «Ուժեղ Հայաստանի» առաջնորդի հետ կապված ինչ-որ միջազգային քրեական գործեր է «բացահայտում», որոնց մասին, վստահաբար, ՀՀ վարչապետի աթոռին թառած էակը ավելի շատ բան կարող էր իմանալ, քան «Հանրապետություն» կուսակցության շարքային ղեկավարը: Մի՞թե ՔՊ-ի լիդերը վախենում է Սամվել Կարապետյանից եւ «Ուժեղ Հայաստանից»…

Բայց ինչո՞ւ եք զարմանում, եթե հայտնի է, որ երկու էշի գարի իրարից ջոկել չկարողացող ՀՀ իշխանությունների համար ամեն ինչ քաղաքական կատեգորիա է, այդ թվում՝ եւ վախը՝ վախն անծանոթ, անսպասելի, իրենց համար անհասկանալի բաներից: Ահավասիկ՝ ազգությամբ հայ Սամվել Կարապետյանը, որ Ռուսաստանից է եկել եւ ուզում է «իր ձեւով» վերաշինել մեր քանդված երկիրը, վախեցնում է սրանց մինչեւ քաղաքական հիստերիայի աստիճանի, եւ սրանք կորցնում են տարրական ադեկվատությունը:

Ի՞նչ անել ստեղծված իրավիճակում. առաջարկում եմ միասին կարդալ Հովհաննես Թումանյանի «Կացին ախպեր» հեքիաթը: Ինչո՞ւ… Որովհետեւ 1907 թվին գրված այդ հրաշալի պատմությունը, կարծես, Սամվել Կարապետյանի եւ մեր մասին է:

«Մի մարդ գնաց հեռու երկիր աշխատանք անելու: Ընկավ մի գյուղ: Տեսավ այս գյուղի մարդիկ ձեռով են փայտ կոտրատում:

- Ախպեր,- ասավ,- ինչո՞ւ եք ձեռով փայտ անում, մի՞թե կացին չունեք:

- Կացինն ի՞նչ բան է,- հարցրեցին գյուղացիք:

Մարդը իր կացինը գոտկից հանեց, փայտը ջարդեց, մանրեց, դարսեց մյուս կողմը: Գյուղացիք այս որ տեսան, վազեցին գյուղամեջ, ձայն տվին իրար.

- Տո՛ւ, եկե՛ք, տեսե՛ք կացին ախպերը ինչ արավ:

Գյուղացիք հավաքվեցին կացնի տիրոջ գլխին, խնդրեցին, աղաչեցին, շատ ապրանք տվին ու կացինը ձեռքիցն առան: Կացինն առան, որ հերթով կոտորեն իրանց փայտը: Առաջին օրը տանուտերը տարավ: Կացինը վրա բերավ թե չէ՝ ոտը կտրեց: Գոռալով ընկավ գյուղամեջ:

- Տո՛ւ, եկե՛ք, եկե՛ք, կացին ախպերը կատաղել է, ոտս կծեց:

Գյուղացիք եկան, հավաքվեցին, փայտերն առան, սկսեցին կացնին ծեծել: Ծեծեցին, տեսան՝ բան չդառավ, փայտերը կիտեցին վրան, կրակեցին: Բոցը բարձրացավ, չորս կողմը բռնեց: Երբ կրակն իջավ, եկան բաց արին, տեսան՝ կացինը կարմրել է:

ԿԱՑԻՆ ԱԽՊԵՐ

- Վա՛յ, տղե՛ք, կացին ախպերը բարկացել է, տեսե՛ք՝ ոնց է կարմրել, որտեղ որ է, մեր գլխին մի փորձանք կբերի: Ի՞նչ անենք: Մտածեցին, մտածեցին ու վճռեցին՝ տանեն բանտը գցեն:

Տարան գցեցին տանուտերի մարագը: Մարագը լիքը դարման էր. գցեցին թե չէ՝ կրակն առավ, բոցը երկինքը բարձրացավ: Գյուղացիք սարսափած վազեցին տիրոջ ետեւից. «Ե՛կ, աստծու սիրուն, կացին ախպորը բա՛ն հասկացրու»»:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ՎԱԽՃԱՆԱԲԱՆԱԿԱՆ-ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԹԵԶԵՐ, ԸՍՏ ՔՊ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ

«Եթե մենք չընտրվենք հունիսի 7-ին, TRIPP չի լինի, խաղաղություն էլ չի լինի, արհեստական բանականություն էլ չի լինի, 4 մլրդ ներդրումներ էլ չեն լինի, դրանք չեն լինի, ժողովուրդ ջան, անկախություն էլ չի լինի…»… Դժվար է հավատալ, բայց հավատացեք, սա ասում է մեր երկրի էկոնոմիկայի նախարարը: Ուրեմն, եթե իրենց չընտրի ժողովուրդը, չի լինի ոչինչ, Հայաստան չի լինի… անգամ արհեստական բանականությունը կմեռնի: Բնական եւ առողջ բանականությամբ, այո, շատ դժվար է հավատալ, որ կարելի է ասել նման բաներ: Ընդ որում, ասողը ներկայացնում է այն իշխանությունը, որի օրոք եղել է եւ պատերազմ, եւ պարտություն, եւ Հայաստանի լինելիությունը դարձել է քննարկման առարկա:

Սրանք խոսքեր են, որոնք հուշում են մեկ բան՝ «եթե 2018 թվականին ձեզ չընտրեին, չէր լինի TRIPP, քանի որ չէին լինելու պատերազմ եւ պարտություն…»: Այո, առանց ձեզ չէր լինելու TRIPP, բայց հիմա արդեն այն, մասնավորապես՝ ձեր շնորհիվ եւ Հայաստանի թուլության հետեւանքով, կա, իրականություն է:

Հիմա, ուրեմն, վախեցնել, թե դրանք չեն լինի, անիմաստ է: Ավելի կարեւոր է այսօր հասկանալ, թե ինչպիսին կարող են լինել այդ խաղաղությունն ու TRIPP-ը, այդ անկախությունն ու ներդրումները, եթե դրանցում տեղ գտնի նաեւ Հայաստանի շահը: Ինչպիսին կլինեն դրանք, եթե Հայաստանը նվազագույն հետաքրքրություն եւ ներկայություն ունենա ոչ թե որպես լիակատար պարտության ենթարկված՝ կողմնակի դերակատար, այլ որպես այդ հողի ու ճանապարհի տերը, սեփական կարծիք ու դիրքորոշում ունեցողը, պատմություն չուրացողը, արժանապատվություն պահողը: Ինչպիսին կլինի խաղաղությունը, եւ քանի տոկոս կլինի TRIPP-ի հայկական մասը, եթե հանկարծ բանակցողներն ունենան ավելի շատ գիտելիքներ, ավելի մեծ փորձառություն եւ համարձակություն, իրական հոգատարություն հայրենիքի նկատմամբ եւ ավելի մեծ պատասխանատվության զգացում: Այ, դա է այսօր պետք հասկանալ:

Հոգ չէ, որ իշխող կուսակցությունը որոշել է վախճանաբանական թեզերով վախի ու սարսափի մեջ պահել ընտրողին՝ մոռանալով, որ այս ընտրողին, պետք է որ այլեւս վախեցնել հնարավոր չլինի, ընդ որում՝ այդ ընտրողը պետք է որ ունենա հիշողություն, վերլուծական միտք, պետք է հասկանա, որ մինչեւ հիմա ինչ խոստացել են, հակառակն են արել, ուրեմն, եթե ասում են՝ չի լինելու, գուցե հենց լինելու է:

Եվ այսպես, սպառնում են, թե ոչինչ չի լինելու, եթե հունիսի 7-ից հետո ՔՊ-ն չլինի իշխող ուժ. մոտավորապես՝ արեւը չի ծագելու արեւելքից ու մայր չի մտնելու արեւմուտքում, ամառը չի գալու, հացը հանապազօրյա չի լինելու մեր սեղանին, մեշոկ պապին գալու է՝ բոլորիս տանի, անկախությունը վերանալու է, բոլորս դառնալու ենք ռուս՝ կապուտաչյա եւ շիկահեր…

Մինչդեռ, ճիշտ հակառակը, բանականությունը հուշում է, որ որոշ բաներ չեն լինելու, եթե ընտրվի ՔՊ-ն: Օրինակ, Հայ առաքելական եկեղեցու հալածանքները շարունակվելու են մանդատ ստացած ՔՊ-ի հաղթանակով, եւ գուցե Եկեղեցին այլեւս չի լինելու, ինչպես չկա Մաշտոցի նկարն Այբբենարաններում, մեր Եկեղեցին անգամ մի QR կոդի արժանի չի համարվելու՝ պատմության գրքերում: Իսկ ռուս, այն էլ՝ կապուտաչյա եւ շիկահեր, մենք ոչ մի պարագայում չենք դառնալու:

Զարմանալ կարելի է, թե ինչպես է, այդուամենայնիվ, գոյություն ունեցել Հայաստանը, երբ չկար ՔՊ-ն, ինչպես է մոլորակը պտտվել, եւ հայ մարդը չի ընկել դրա վրայից, ինչպես են հաղթել

պատերազմներում ու փրկվել ցեղասպանությունից, այս ամենը զուտ պատահականություն է, քանզի, ըստ ՔՊ-ական բանականության, այդ ամենը չպիտի լիներ՝ առանց ՔՊ-ի:

Կատակը՝ մի կողմ, ես լուրջ հարց ունեմ: Լավ, արհեստական բանականությունն ինչո՞ւ չպետք է լինի, ո՞վ է սպանելու արհեստական բանականությանը, ինչո՞ւ: Եթե առողջ ու բնական բանականությամբ որեւէ մեկը գիտի այս հարցի պատասխանը, թող ասի, որովհետեւ, իրոք, տագնապ է պատում այն մտքից, թե հանկարծ ու արհեստական բանականությունը չի լինի…

Շաքե ԱՎՈՅԱՆ

ՄԵՏՖՈՐՄԻՆ

ՄԵՏՖՈՐՄԻՆ ՍՏԱՑՈՂ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՃՆՇՈՂ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՆԴՐՈՒՄ Է ԻՐԵՆՑ ՏԱԼ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԿԱՄ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԴԵՂ

Հարգանքով՝
Բժիշկ
Ժան-Միշել
ԷՔԵՐՅԱՆ

«Արփիմեդ» դեղագործական ընկերությունն արձագանքել է «Հրապարակի» փետրվարի 21-ին հրապարակած հոդվածին՝ «Բժշկի բացահայտումները» վերտառությամբ, որտեղ ֆրանսահայ բժիշկ Ժան-Միշել Էքերյանը ներկայացրել է այս ընկերության արտադրած «Մետֆորմին» դեղամիջոցի վնասակարությունը: Մեր հրապարակումից հետո Առողջապահական տեսչական մարմինը վարույթ է սկսել՝ կապվելով «Հրապարակի» խմբագրի, ապա՝ բժիշկ Էքերյանի հետ: Իսկ «Արփիմեդ»-ն իր ֆեյսբուքյան էջում հերքում է տարածել՝ Էքերյանի հրապարակած տեղեկություններն անվանելով ապատեղեկատվություն եւ զրպարտություն: Ահա այն.

Մենք պաշտոնապես հայտարարում ենք.

1. Փորձաքննության վերաբերյալ պնդումները կեղծ են:

Հոդվածում նշվում է, թե իբր Hôpital Lariboisière-ում իրականացվել է մեր արտադրանքի լաբորատոր փորձաքննություն, սակայն ներկայացված «եզրակացությունը» չի պարունակում նույնականացվող լաբորատոր տվյալներ, փորձաքննության արձանագրություն կամ վավերացումներ: Տվյալ լաբորատորիան կենսաբանական տոքսիկոլոգիական լաբորատորիա է՝ այլ բնույթի փորձաքննություններ իրականացնող, եւ անհայտ է, թե ինչ մեթոդով եւ ինչ նյութերով է իրականացվել փորձաքննությունը (եթե այն իրականացվել է), ինչպես նաեւ՝ արդյո՞ք փորձաքննության համար նախապես գնվել է մետֆորմինի համեմատական ստանդարտ (առանց որի հնարավոր չէ ճշգրիտ փորձաքննություն իրականացնել): Մենք պաշտոնական նամակով պահանջել ենք նշված լաբորատորիայից՝ տրամադրել փորձաքննության տվյալները, սակայն դեռեւս արձագանք չի եղել:

2. Մեր ընկերության «Մետֆորմին» դեղն արտադրվում է միջազգային GMP պահանջներին համապատասխան եւ ենթարկվում է բազմաստիճան որակի հսկողության: Յուրաքանչյուր խմբաքանակի համար իրականացվում են բոլոր անհրաժեշտ որակական եւ քանակական փորձաքննությունները՝ մինչեւ խմբաքանակի բացթողումը: Վերջին 4 տարում արտադրվել եւ պետական կարիքների համար մատակարարվել է տարեկան մինչեւ 200 խմբաքանակ՝ յուրաքանչյուրը՝ 3000 տուփ, եւ որակի հետ կապված որեւէ խնդիր չի արձանագրվել: Մետֆորմինը պարբերաբար փորձաքննության է ենթարկվում ՀՀ ԱՆ «Դեղերի եւ բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

3. Հրապարակման մեջ բացահայտորեն գովաբանվում է արտասահմանյան արտադրության դեղը՝ փորձելով կասկածի տակ դնել հայկական արտադրանքը: Սա ստեղծում է հիմնավոր կասկած, որ հրապարակման նպատակը ոչ թե հանրային առողջության պաշտպանությունն է, այլ հայկական արտադրողի վարկաբեկումը եւ արտասահմանյան արտադրանքի քարոզչությունը:

4. Հոդվածում բժիշկը նշում է «բազմաթիվ պացիենտների դժգոհության» մասին, թեեւ չի հանդիսանում նրանցից որեւէ մեկի բուժող բժիշկը:

Քանի՞սն են դժգոհողները, արդյո՞ք կարող է ներկայացնել կոնկրետ տվյալներ, արդյո՞ք բոլոր դեպքերում դեղաչափը ճիշտ է նշանակված: Նման «եզրակացության» համար անհրաժեշտ է ունենալ առնվազն գրանցված եւ հիմնավորված վիճակագրական ու կլինիկական տվյալներ՝ հաշվի առնելով բազմաթիվ գործոններ:

Մենք կապվել ենք նշված բժշկի հետ եւ նրա կողմից համապատասխան արձագանք չլինելու դեպքում դիմելու ենք իրավապահ մարմիններին՝ ընկերության դեմ զրպարտության մեղադրանքով: «Արփիմեդ» ընկերությունն իր գործունեության 25 տարիների ընթացքում վաստակել է բարի համբավ եւ վստահություն եւ բազմիցս ստացել հարյուրավոր հիվանդանոցների, կլինիկաների, ինչպես նաեւ՝ հազարավոր պացիենտների եւ բժիշկների դրական արձագանքներ՝ մեր արտադրանքի արդյունավետության վերաբերյալ:

ՀԳ. *«Արփիմեդ» ընկերության Որակի հսկման լաբորատորիայի ստուգիչ նմուշների պահեստում առկա են արտադրված բոլոր խմբաքանակների նմուշները: Անհրաժեշտության դեպքում պատրաստ ենք ցանկացած խմբաքանակի փորձաքննությունը կազմակերպել թե՛ մեր լաբորատորիայում, թե՛ Դեղերի փորձագիտական կենտրոնի լաբորատորիայում՝ անկախ փորձագետի կողմից՝ հոգալով բոլոր անհրաժեշտ ծախսերը:*

Այս գրառմանն արձագանքել է նաեւ բժիշկ Էքերյանը.

Հարգելի պարոն/տիկին, ես պատասխանում եմ Ձեր հաղորդագրությանը, չնայած այն բացարձակապես անտեղի է: Ես բժիշկ եմ Փարիզում եւ «ՀայՄեդ» բարեգործական ընկերության անդամների հետ միասին, 1988 թվականից ի վեր, մարդասիրական առաքելություններ եմ իրականացնում Հայաստանում եւ Արցախում՝ տարեկան երեք անգամ հաճախականությամբ: Ինչպես կարող եք պատկերացնել՝ մեր կողմից զննված եւ բուժված հիվանդների թիվը զգալի է:

2-րդ տիպի շաքարախտի դեպքում, որը հինգ հայտնաբերված տեսակներից ամենատարածվածն է, որպես առաջին գծի բուժում՝ օգտագործվում է «Մետֆորմին» դեղամիջոցը: Այս հիվանդությամբ տառապող հիվանդների քանակը Հայաստանում գնահատվում է մոտ 13.5% (չեմ կարող լիովին հաստատել տվյալների ճշգրտությունը), հետեւաբար, մեր յուրաքանչյուր առաքելության ժամանակ կարող ենք հանդիպել մի քանի տասնյակ նման հիվանդների:

2-րդ տիպի շաքարախտի միջինից մինչեւ ծանր դեպքերում, Հայաստանում արտադրված «Մետֆորմին» ստացող հիվանդների ճնշող մեծամասնությունը խնդրում է մեզ՝ իրենց տալ ֆրանսիական կամ գերմանական արտադրության «Մետֆորմին»՝ վստահեցնելով, որ վերջիններս ավելի լավ են կարգավորում իրենց շաքարախտը: Հասկանալու համար այս երեւույթի պատճառը, ես վերցրի նշված դեղամիջոցի հայկական արտադրության մեկ տուփ, որից մեկ դեղահաբ ուղարկեցի վերլուծության Ֆրանսիայի ամենաառաջատար թունաբանական ծառայության լաբորատորիայում, որն ամեն օր կատարում է ամենատարբեր դեղամիջոցների խտությունների վերլուծություն, մասնավորապես՝ վերակենդանացման բաժանմունքում ծանր թունավորված հիվանդների բուժման, ինչպես նաեւ՝ դատական գործընթացների շրջանակում, հետեւապես՝ այս լաբորատորիայի ճշգրտությունը որեւէ կասկած չի կարող հարուցել: Այն գտնվում է Փարիզի հանրային հիվանդանոցների համալսարանական կենտրոններից մեկում:

Քանի որ ենթադրում էի, որ դեղամիջոցի արդյունավետության նվազումը կարող է կապված լինել հաբում պարունակվող օժանդակ նյութերի հետ, մեծապես զարմացա՝ իմանալով, որ յուրաքանչյուր հաբում առկա էր ընդամենը 500 մգ նշված 1000 մգ-ի փոխարեն: Այս եզրակացությունը ստորագրված է թունաբանության լաբորատորիայի բաժնի ղեկավարի կողմից:

Դեղահաբի մեջ պարունակվող ակտիվ նյութի վերլուծության վերաբերյալ պաշտոնական փաստաթղթերը գտնվում են ինձ մոտ, ինչպես նաեւ՝ ապահով վայրում պահված են: Այդ փաստաթղթերում նկարագրված են հետազոտության բոլոր տեխնիկական մանրամասները՝ ներառյալ նյութի վերլուծության մեթոդը եւ կիրառված նյութերը: Այդ փաստաթղթերը կհանձնվեն համապատասխան իրավասու մարմիններին:

Բացի այդ, մեկ տարի առաջ մեկ այլ արեւմտյան երկրի մի կազմակերպություն իրականացրել է նմանատիպ հետազոտություններ (որի մասին ես տեղյակ չէի), որոնց արդյունքները լիովին համընկնում են իմ ստացած արդյունքների հետ:

Հնարավոր է, որ արտադրական թերություն է տեղի ունեցել Ձեր արտադրական շղթայում՝ ակտիվ նյութի մատակարարի մոտ կամ Երեւանի լաբորատորիայի ռեագենտների հետ կապված: Կարող եմ ենթադրել, որ Դուք կարող եք գործել բարեխղճորեն: Այդ դեպքում ուղղեք սխալը, եւ ես մամուլում հայտարարություն կանեմ՝ բացատրելով, որ Դուք մեղավոր չեք, այլ եղել է տեխնիկական խնդիր, որը շտկվել է:

ԹՐԱՄՓԸ ՇՏԱՊՈՒՄ Է, ՊՈՒՏԻՆԸ՝ ԱՆՁԻՋՈՒՄ

Նարեկ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը մինչեւ այս տարվա հուլիսի 4-ը՝ ԱՄՆ Անկախության 250-ամյակը, ցանկանում է հասնել Ուկրաինայում խաղաղության համաձայնագրի կնքմանը: Սակայն չկա որեւէ նախանշան կամ ազդակ, որ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը պատրաստ է զիջումների եւ համաձայնելու է առաջարկվող պայմաններին, որոնք այնքան էլ չեն համապատասխանում վերջինիս առավելապաշտական պահանջներին՝ գրում է Bloomberg-ը:

Բանակցություններն արդեն մի քանի անգամ ընդհատվել են, եւ նույնիսկ մի քանի ամերիկացի բարձրաստիճան ներկայացուցիչ մասնավոր զրույցներում խոստովանել են, որ որեւէ կերպ չեն տեսնում նախանշաններ, որ Պուտինը պատրաստ է հրաժարվել իր պահանջներից: Եռակողմ բանակցությունների երեք ռաունդները, որոնք տեղի ունեցան այս տարի՝ Աբու Դաբիում եւ Ժնեւում, որեւէ էական արդյունքի չհանգեցրին: Ընդ որում, Ուկրաինայի եվրոպական դաշնակիցները շարունակում են մեկուսացված մնալ բանակցային գործընթացից, թեեւ հենց նրանք են հիմնականում ֆինանսավորում Կիեւի համար զենք-զինամթերքի գնման պրոցեսն այն բանից հետո, երբ ԱՄՆ նախագահ Թրամփը փակեց Ուկրաինային ցուցաբերվող ամերիկյան օգնությունը: Ու թեեւ բանակցությունները ֆորմալ առումով շարունակվում են եւ կոչվում են «կառուցողական», սակայն փաստացի հայտնվել են փակուղային վիճակում:

«Մոսկվան ու Վաշինգտոնը փաստացի մրցում են, թե ով պետք է առաջինը զիջի բանակցություններում, որոնք ղեկավարում են ԱՄՆ հատուկ դեսպանորդ Սթիվեն Վիթքոֆն ու խորհրդական Ջարեդ Քուշները: Դա նշանակում է, որ կամ Ռուսաստանը պետք է հրաժարվի իր որոշ «կարմիր գծերից»՝ ներառյալ նաեւ ողջ Դոնբասի նկատմամբ վերահսկողության սահմանումը, կամ Միացյալ Նահանգները կհրաժարվի Ուկրաինայից»,- գրված է հոդվածում: Նշվում է, որ Ուկրաինայի եւ նրա դաշնակիցների համար առանցքային խնդիր է մնում նաեւ այն, որ Պուտինը կարող է ֆորմալ առումով համաձայնել հրադադարին՝ թույլ տալով, որ Թրամփը հայտարարի հաջողության մասին, սակայն Ռուսաստանը կշարունակի հիբրիդային պատերազմն ու սաբոտաժի արշավը եւ կմիջամտի ուկրաինական սպասվող ընտրություններին՝ ապակայունացնելու այդ երկրի ներքին իրավիճակը: Եզրակացությունը, ըստ պարբերականի, մեկն է՝ քանի դեռ Պուտինը Ռուսաստանում իշխանության ղեկին է, իսկ ռուսները կունենան միջոցներ՝ պատերազմը շարունակելու, այն շարունակվելու է: Եվ նույնիսկ տեւական ֆինանսատնտեսական խնդիրները չեն կարողանա ստիպել, որ Կրեմլը գնա զգալի զիջումների:

ՄԱՆԿԱՏՈՒՆ

ԵԹԵ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԸ ՀԱՐՅՆ ԱՆՏԵՍԵՆ, ԵՐԵԽԱՆԵՐ, ԴՈՒՔ ՁԵՌՔ ՄԵԿՆԵՔ ՆԱՀԱՏԱԿՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Գրող, բանաստեղծ, թարգմանիչ, դերասան, երգահան Գագիկ Շիրմազանյանը (Շիրմազան) մեզ հետաքրքիր տեղեկություններ հաղորդեց Ստեփանավանի մանկատների պատմությունից: Կարծում ենք՝ դա կհետաքրքրի նաեւ մեր ընթերցողներին:

Հայոց ցեղասպանությունից հետո Ամերիկյան բարեգործական ընկերության՝ Ամերկոմի որբանոցները շատ որբերի համար փրկության միակ ապաստարաններն էին: Շատերի ճակատագրերը հենց այս որբանոցներում «գրվեցին»: Հայաստանում առաջին որբանոցը բացվել է 1915թ. նոյեմբերի 20-ին, Ալեքսանդրապոլում:

1916 թ. Վրաստանի եւ Իմերեթի թեմի հայոց առաջնորդը դիմել է Կովկասի ռազմաճակատի փախստականների մասին հոգացող գլխավոր լիազորին՝ խնդրելով թույլ տալ Էջմիածնի մանկական ապաստարանից փախստական որբերին տեղափոխել Լոռի՝ Ստեփանավան:

1918 թ. Ստեփանավանում բացվել է ամերիկյան որբանոցը (հետագայում վերանվանվել է մանկատուն): 1918 թ. մայիսի 19-21-ը Ստեփանավանում է գտնվել հայ ազատագրական պայքարի ականավոր գործիչ, գեներալ-մայոր Անդրանիկ Օզանյանի ղեկավարած զորամիավորումը, որի կազմում ռուս սպա Պյոտր Սիբիրցեւը վերը նշված օրերի մասին պատմելիս գրել է, որ Ստեփանավանում եղել է մի քանի մանկատուն, որոնց ղեկավարները շփոթվել են հայկական զորամասի նահանջի մտքից: Անդրանիկի հետ խորհրդակցելուց հետո որոշվել է երեխաներին տեղափոխել Քուլագերան կայարան, իսկ այնտեղից, երկաթուղով՝ Թիֆլիս: Մանուկներին ձիերի վրա կայարան են հասցրել զորամասի հեծյալները: Այդ որբ, հիվանդ ու սովալլուկ փոքրիկներին որպես Հայաստանի դժբախտության մարմնացում է ներկայացնում Պյոտր Սիբիրցեւը եւ իր կոչը հղում աշխարհի մանուկներին. «Ոտքի՛ կանգնեցեք, բոլոր ժողովուրդների երեխանե՛ր, եթե հարցն անտեսեն մեծահասակները, դուք ձեր ձեռքը մեկնեք նահատակվող Հայաստանին, փրկեք այնպիսի երեխաների, ինչպիսին դուք եք, որոնք ունեն ապրելու իրավունք, ինչպես դուք»:

Հայաստանի համար ծանր տարիներին՝ 1919թ. հունիսի 1-ին, Բաթումում խարիսխ է նետում ամերիկյան 2 բեռնանավ՝ մոտ 10 հազար տոննա ցորենով եւ 619 տոննա լոբով ու սիսեռով, որը գնահատվում էր 2 միլիոն դոլար: Չորս օր անընդմեջ գնացքներով կենսատու բեռը տեղափոխվում է Հայաստան: Հունիսին կատարվում է եւս 3 առաքում՝ 11 հազար տոննա պարենամթերքով... Հոգեվարքի մեջ հայտնված Հայաստանը սկսում է շնչել:

1919-ի մայիսի 1-ից Ամերկոմին են հանձնվել 90 որբանոց, 10 հիվանդանոց՝ 13 հազար 942 որբերով՝ Վանից, Մուշից, Կարսից, Ալաշկերտից, Էրզրումից: 1920 թվականի դեկտեմբերին Ամերկոմի որբանոցներում խնամվող երեխաների թիվը կազմել է 18 հազար 500: Կոմիտեն իր գործունեությունը շարունակել է մինչեւ 1929-ը՝ մինչեւ երեխաների չափահաս դառնալը: 1922 թվականին Ալեքսանդրոպոլում հիմնվել է մանկատուն՝ 40 որբերի համար, իսկ Ստեփանավանում՝ նաեւ մսուր-մանկապարտեզ: Խորհրդային տարիներին՝ 1923 թ., Կինբաժնի հատուկ հանձնաժողովը Երեւանում հավաքել է 500 անապաստան երեխա, որոնցից 200-ն ընդունել է Ամերկոմը եւ ուղարկել Ստեփանավանի մանկատներ:

Ստեփանավանի մանկատների սաներն ակտիվ մասնակցություն են ունեցել քաղաքում կազմակերպվող միջոցառումներին: Մասնավորապես, 1925 թ. հուլիսի 5-ին Ստեփանավանում տեղի ունեցած պիոներական կազմակերպության 4-րդ տարեդարձի տոնակատարությանը, բացի պիոներներից, ներկա են եղել Ամերկոմի 900 որբեր:

1926 թվականին Ամերիկյան կոմիտեի Ստեփանավանի բաժանմունքը վերջնականապես լուծարվել է, եւ գրասենյակը տեղափոխվել է Գյումրի: Ամերկոմի՝ Ստեփանավանում զբաղեցրած բոլոր շենքերը հանձնվել են Լուսժողկոմատի մանկատնային բաժնին, որտեղ տեղափոխվել են 1000 հոգուց ավելի մանկահասակ սաներ: Մինչեւ 1929 թ. ամերիկյան մանկատները դրսից ամսական ստացել են 150 հազար դոլարի օգնություն, որը շարունակվել է դրանից հետո անգամ՝ ամսական 100 հազարի չափով... Տասնյակ հազարավոր որբեր՝ շնորհիվ Ամերկոմի, ոչ միայն փրկվեցին, այլեւ համեմատաբար ապահով անցկացրին 20-ականների սկզբի սովը, ստացան բավական լավ կրթություն, տիրապետեցին լեզուների, վարժվեցին արհեստներում, ծանոթ էին քաղաքավարության, վարվելակերպի կանոններին: Նրանցից շատերը դարձան մեր երկրին իսկապես պիտանի քաղաքացիներ:

1939 թվականի օգոստոսի 15-ին Ստեփանավանում բացվել է Հայաստանի մանկատների 4-րդ օլիմպիադան, որին մասնակցել են Երեւանի, Լենինականի, Ստեփանավանի, Բայազետի, Քանաքեռի, Գորիսի մանկատների երգի-պարի խմբերը:

1960 թվականի հունիսի 18-ին քաղաքային թիվ 1 մանկապարտեզի դահլիճում տեղի է ունեցել մանկատան ու մանկապարտեզի երեխաների ձեռքի աշխատանքների ցուցահանդես:

ՀԳ. *Լուսանկարում Ստեփանավանի մանկատան սաներն են՝ դաստիարակների եւ տեղի բնակիչների հետ: Մանկատունը գտնվել է Ստեփանավանի ներկայիս համաբուժարանի տեղում:*

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

ԼԵՆԻՆԸ ԴԱՄԲԱՐԱՆԻՑ ԼՈՒԾՈՒՄ ԷՐ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՐՑԵՐԸ, ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ՉԻ՞ ԿԱՐՈՂ

Ապարանցի, Արագածոտնի մարզի Նիգավան համայնքի բնակիչ, իսկ այժմ ծերանոցում օրերը մթնեցնող բանաստեղծ Հարություն Համամջյանը նամակ-բողոք-խնդրագրերով ռմբակոծում է Նիկոլ Փաշինյանին ու փոխվարչապետ Միհր Գրիգորյանին: Արդեն ութերորդ դիմումն է ուղարկում հարգարժան պարոններին, իսկ նրանց կողմից՝ միայն լռություն: Պոետի հոգին վիրավորում է ոչ այնքան այն, որ նրանք չեն օգնում իրեն՝ հետ ստանալ Նիգավանի համայնքապետի թեթեւ ձեռքով իրենից խլված հողը, որքան այն, որ իրեն արհամարհում են, չեն պատասխանում իր՝ «տրիլիոն անգամ» ուղարկված նամակներին:

«Հին ու բարի ժամանակներում անձամբ ճանաչել եմ երկու պապիկների, որոնք նախորդ դարի 50-ական թվականներին դիմել են Մոսկվա-Կրեմլ՝ Լենինի դամբարանին: Եվ գիտե՞ք՝ Լենինը դամբարանից լուծել է նրանց հարցերը: Իսկ ես դիմել եմ ձեզ՝ երկուսիդ: Մի դեպքում դիմումիս պատասխանել է կառավարության դիմումներն ընդունող Անի Կարապետյանը, որը չունի քաղաքացիների դիմումներին պատասխանելու իրավունք: Իսկ նախորդ դիմումը, որը հանձնեցի նույն Անի Կարապետյանին՝ ոստիկանի ներկայությամբ, ընդունվել է ի գիտություն: Ինձ մոտ այնպիսի տպավորություն է, թե ես ոչ թե գրավոր դիմել եմ ՀՀ վարչապետին եւ փոխվարչապետին, այլ նամակ եմ գրել ռուսաց թագավորին»,- ասում է Հարությունը:

Ոչ միայն Փաշինյանն ու Գրիգորյանն են «պասլատ անում» քաղաքացուն, այլեւ՝ ՄԻՊ Անահիտ Մանասյանի գրասենյակի աշխատող, իրավաբան Լուսինե Հախոյանը, որը նրան ասել է. «Ո՞ւր գնամ, որ քեզնից պրծնեմ: Տեսնում ես՝ ինձ վրա ճնշումներ կան»: Հարութն էլ կատակել է, թե՝ գնա ֆիզարձակուրդ: Նա էլ շատ լուրջ դեմքով պատասխանել է. «Իրոք կմտածեմ»: Եվ մի քանի ամսից իրոք ֆիզ է գնացել:

Իսկ պոետի խնդրանքը մի հասարակ բան է՝ օգնեն իրեն, որ հետ ստանա իրեն սեփականության իրավունքով պատկանող պապական հողը: «Նույն խնդրանքով դիմել եմ ՀՀ գլխավոր դատախազություն, սակայն դիմումս առաջ գնալու փոխարեն հետ գնաց: ՀՀ գլխավոր դատախազը դիմումս ուղարկել էր Արագածոտնի դատախազին: Նա էլ իր հերթին՝ Ապարանի ոստիկանություն, սրանք էլ իրենց հերթին իմ հողային հարցն ուղարկել էին «ուչաստկովի» Վահեին, նա էլ, թե՝ հարցը կարող է լուծվել դատական կարգով: Չնայած որ գյուղապետի արարքը քրեական հանցագործություն է, ՀՀ հանրային պաշտպանները հրաժարվեցին հարցը նույնիսկ վարչական դատարան ներկայացնելուց: Նրանք ավելի քան 8 ամիս է, որ իմ հայց՝ ընդդեմ բեսպրեդելիստ գյուղապետի, զանազան անհեթեթ, անտրամաբանական, խուսափողական, լոյալ կամ մերժողական բանավոր պատասխաններով ցրում են»,- գանգատվում է Հարությունը:

Ծերանոցում նա շատ ազատ ժամանակ ունի: Նստել է ու հաշվել, որ Նիգավան համայնքի ղեկավար Արտաշ Գալարյանն իրեն հասցրել է 600-800 հազարի վնաս: Վարչական դատարան մտնելու համար կպահանջվի 20-30 հազար ՀՀ դրամ, որը պոետն անգամ երազում չի տեսել: «Պարոն Փաշինյան, 2006-ից ինձ ճանաչում եք, երիտասարդ տարիքում գոմեշի նման եմ աշխատել՝ շինարարական պանելը մի ձեռքով վերցնում՝ դնում էի 10-րդ հարկի տանիքին: Հիմա ֆիզիկական աշխատանք անել չեմ կարող: Սակայն կարող եմ գոնե ինքս ինձ համար աշխատանք ճարել»,- գրում է պոետը:

Նիկոլի ու նրա կառավարության նախաձեռնություններին միշտ հետեւում է, անգամ խոստացել է վարչապետին, որ «ստարտապեր» կդառնա: Բիզնես պլանը հետեւյալն է՝ մետրոյում, գետնի տակ քաղաքական կամ զոքանչների մասին անեկդոտներ կվաճառի, երեք աշխատատեղ կբացի: Մետրոյում՝ որ հանկարծ իրեն ճանաչող մարդիկ հորեղբոր տղաներին «խաբար չտան», թե ինչ գործի վրա է իրենց եղբայրը: Բայց «ստարտն» անհաջող էր, դիմել է վարկի համար, տոկոսի տակ ընկել: Հարությունը բարկացել է ու մի ջղային նամակ էլ է գրել, թե երիկամս վաճառեմ, «Վարկս»-ի պարտքը տամ կամ արյունս՝ որպես դոնոր, որ ինձ հանեն բանկերի «սեւ ցուցակներից»:

«Իմ այդ հոդվածից հետո ծերանոց եկավ սոցապնախարար Արսեն Թորոսյանը... Հաջորդ օրը ինձ ծերանոցից, խնդրելով եւ համոզելով՝ տարան Ավանի հոգեբուժարան՝ ասելով, թե «մենք ամեն տարի գնում ենք ստուգման» ... Գնացի: Դրսում սպասեցի, ինձ ոչ մի բժիշկ էլ չմոտեցավ: Հետո հետ եկանք ծերանոց: Հիմա ես արդեն կասկածներ ունեմ՝ հնարավո՞ր է, որ ծերանոցն ինձնից թաքուն, վարչապետի նամակների համար ինձ Ավանի հոգեբուժարանում հաշվառման է կանգնեցրել: Չէ՞ որ մենք ապրում ենք ՀՀ-ում՝ մեր երկրում ինչպե՞ս կարող է մարդը հոգեկան հիվանդ չլինել: Եթե հողային հարցերս 2008-ից մինչեւ հիմա չեն լուծել դատախազները, օմբուդսմենները, մարզպետարանը, ոստիկանությունը, կադաստրի կոմիտեն, հանրային պաշտպանները, ապա ո՞ւմ են պետք այդ կառույցները: Եթե դրանք չլինեին, ես կդիմեի թուղթ ու գիր անողներին, ու նրանք 72 ժամում կլուծեին թե՛ իմ հողային հարցերը, թե՛ գյուղապետի հարցերը»,- դառնանում է պոետը:

Բայց վերջում խնդրում է, որ անպայման հրապարակենք իր շնորհակալությունը թիվ 1 ծերանոցի տնօրեն Խաչիկ Ղազարյանին եւ Արագածոտնի մարզպետարանից՝ Կարեն Թաթուլյանին՝ իր նկատմամբ հոգատար լինելու համար:



Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ԵՄ-Ն ՊԱՀԱՆՋՈՒՄ Է ՌՈՒՍԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ԴՈՒՐՍԲԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Փետրվարի 23-ին Բրյուսելում՝ ԵՄ անդամ երկրների ԱԳ նախարարների հավաքի ժամանակ քննարկում էին Ռուսաստան-Ուկրաինա խաղաղության համաձայնագրի կետերը, որտեղ ներկայացված էին ԵՄ պահանջները ՌԴ-ին, որոնց ընդունման դեպքում միայն ԵՄ-ն կհամաձայնի, որ Ուկրաինան խաղաղության պայմանագիր կնքի Ռուսաստանի հետ: ԵՄ պահանջների ցանկը ոչ միայն չափազանց ընդարձակ է, դրանք հանգում են, ըստ էության, Ռուսաստանի կողմից իր պարտության եւ կապիտուլյացիայի ընդունմանը: Քանի որ ռազմաճակատում ՌԴ-ը պարտություն չի կրում, հակառակը՝ գրավում է տարածքներ, որը շատերն անվանում են «սողացող առաջխաղացում», որեւէ հավանականություն չկա, որ Ռուսաստանը կընդունի այդ պահանջները, ինչն էլ նշանակում է, որ պահանջներն առաջ են քաշվել խաղաղության պայմանագրի ստորագրումը թույլ չտալու համար: ԵՄ-ն չի թաքցնում, որ այս պահին խաղաղությունն իրենց շահերից չի բխում, իրենք ցանկանում են հասնել Ռուսաստանի տնտեսական եւ ռազմական ռեսուրսի մաշեցմանը, ինչի մասին խոսեց նաեւ Գերմանիայի կանցլեր Ֆրիդրիխ Մերցը: Նաեւ պահանջների ամբողջականությունն է ցույց տալիս, թե ընդհանրապես ինչ է ուզում Եվրոպան ռուս-ուկրաինական պատերազմից, ինչ է ակնկալում ստանալ միացյալ Եվրոպան՝ Բրյուսելը, պատերազմի արդյունքում:

ԵՄ-ի կողմից Ռուսաստանին ներկայացվող պահանջների մեջ կա նաեւ Հայաստանին վերաբերող պահանջ՝ Ռուսաստանի զորքերի դուրսբերում Հայաստանից: Այդ պահանջը չի վերաբերում միայն Հայաստանին, այլեւ՝ Ուկրաինային. ենթադրվում է, որ Ռուսաստանն իր զորքերը պետք է դուրս բերի Ուկրաինայի գրաված տարածքներից, այդ թվում՝ Ղրիմից, եւ ստեղծվի ապառազմականացված գոտի: Մոլդովայից նկատի ունեն Մերձդնեստրի Հանրապետությունը, Վրաստանից նկատի ունեն Հարավային Օսիայի եւ Աբխազիայի հանրապետությունները, որոնք Ռուսաստանի կողմից ճանաչվել են անկախ պետություններ, ինչպես նաեւ՝ Բելառուսից: Եթե Ուկրաինայի, Մոլդովայի եւ Վրաստանի դեպքում ԵՄ պահանջները միջազգային իրավունքի տեսակետից հիմնավոր են, ռուսական զորքերը գտնվում են այդ երկրների միջազգայնորեն ճանաչված տարածքներում եւ դուրս են այդ երկրների վերահսկողությունից, այդ երկրների իշխանություններն իրենք են պահանջում ռուսական զորքերի հեռացում այդ տարածքներից, ապա Հայաստանի եւ Բելառուսի դեպքում ռուսական զորքերի հեռացման պահանջը փոքր-ինչ տարօրինակ է հնչում: Ո՛չ Հայաստանի եւ առավել եւս ո՛չ էլ Բելառուսի իշխանությունները Ռուսաստանի առաջ պաշտոնական պահանջ չեն բարձրացրել՝ զորքերը դուրս բերելու իրենց երկրների տարածքից: ԵՄ այդ պահանջն ընդամենը նշանակում է, որ Եվրամիությունն այս երկրները համարում է ոչ թե ինքնիշխան պետություններ, այլ՝ իր ազդեցության գոտի, հետեւաբար, իրեն իրավասու է համարում՝ որոշելու, թե այդ երկրների տարածքում ինչ զորքեր կարող են տեղաբաշխված լինել: Իհարկե, անիմաստ է ակնկալել, որ Հայաստանի իշխանությունները որեւէ կերպ կարձագանքեն Բրյուսելի պահանջին:

ԵՄ-ի կողմից Ռուսաստանին ներկայացվող պահանջների ամբողջությունը հանգում է նրան, որ Ռուսաստանը եւս պետք է վերածվի ԵՄ ազդեցության գոտու, ընդունի ԵՄ գերիշխանությունը Ռուսաստանի նկատմամբ: Ահա, դրանցից մի քանիսը. «Վերջ դնել ապատեղեկատվությանը, դիվերսիային, կիբերհարձակումներին, օդային տարածքի խախտումներին եւ ընտրություններին միջամտությանը ԵՄ-ում եւ հարեւան երկրներում: Ռուսաստանի ազգային օրենսդրության գերակայության վերացումը միջազգային իրավունքի նկատմամբ: Փոխհատուցման վճարումներ Ուկրաինային, եվրոպական պետություններին եւ ընկերություններին, այդ թվում՝ շրջակա միջավայրին հասցված վնասի համար: Ռուսաստանի ժողովրդավարացում. ընտրություններ միջազգային հսկողության ներքո, քաղբանտարկյալների ազատ արձակում, լրատվամիջոցների ազատություն, օտարերկրյա գործակալների մասին օրենքի չեղարկում, համագործակցություն Նավալնիի եւ Նեմցովի գործերի քննության գործում»:

Ինչպես տեսնում եք՝ այս պահանջների ընդունումը Ռուսաստանի համար կնշանակի ԵՄ-ից վասալային կախվածության ընդունում, այնպիսի կախվածություն, ինչպիսին ունի Հայաստանը կամ նույն Մոլդովան, կամ Ուկրաինան: Ռուսաստանը մերժում է ընդունել այս ուլտիմատիվ եւ ոչնչով չհիմնավորված պահանջները, որոնք իմաստ կունենային միայն այն դեպքում, եթե Ուկրաինայի կամ ԵՄ-Ուկրաինա համատեղ զինված ուժերը լինեին Սմոլենսկի մատույցներում կամ պատրաստվեին Մոսկվայի գրավման օպերացիային:

Ինչո՞ւ են եվրոպացիներն այդքան կատեգորիկ, մի՞թե նրանք չեն հասկանում, որ այսօր Ռուսաստանին նման պահանջներ ներկայացնելը ոչ միայն իրատեսական չէ, այլեւ ֆանտաստիկայի ժանրից է: Իհարկե, հասկանում են, բայց այս պահանջները նոր չէ, որ գրվել են, դրանք գրվել են դեռ 2022-ին, երբ պատերազմը նոր էր սկսվել, եւ ԵՄ-ում հույս ունեին, որ Ուկրաինան իրենց աջակցությամբ շատ արագ հաղթանակի կհասնի Ռուսաստանի նկատմամբ: ԵՄ-ում հասկանում են նաեւ, որ առանց Ռուսաստանի ռեսուրսներին տիրանալու, իրենք զարգացման որեւէ հեռանկար չունեն: Ինչպես ԱՄՆ-ն տիրացավ Վենեսուելայի նավթին եւ ոսկուն, հիմա էլ փորձում է տիրանալ Իրանի, Գրենլանդիայի եւ այլ երկրների հանքահումքային ռեսուրսներին, ԵՄ-ի համար միակ հնարավոր կերակուրը Ռուսաստանն է, առանց Ռուսաստանի նավթի, գազի եւ մյուս հանածոների անվճար շահագործման ԵՄ-ն զարգացման որեւէ հեռանկար չունի: Իսկ դրան հնարավոր է հասնել միայն Ռուսաստանին պարտության մատնելու, այնտեղ դրածո իշխանություն նշանակելու միջոցով: ԵՄ պահանջների իմաստն այն է, որ քանի դեռ Ռուսաստանի պարտությունն արձանագրված չէ, խաղաղություն չի լինի:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 25.02.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԷՐ, ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԷՐ, ԻՍԿ ՀԻՄԱ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ Է

Այս տարվա սուրբծննդյան տոնակատարություններից հետո Հայ առաքելական եկեղեցու դեմ ձեռնարկված անհեռանկար պատերազմում հերթական ասպատակության թիրախ ընտրվեց Մասիսի եկեղեցին: Մեր նոր «սահմանադիրը» կամ «քայլող սահմանադրությունը» թանկարժեք կորտեժից դուրս լողաց, համեստ-հանդիսավոր կանգնեց թիկնապահների ու մի խումբ կամակատարների առաջ, խորամանկ ու քննախույզ զննեց բոլորին, ապա շքախմբի գլուխն անցնելով՝ խրոխտ առաջնորդեց գրոհը եկեղեցու սուրբ պատերի դեմ, որոնց ներսում հերթական պատարագը պիտի պղծեր կարգալույծ հոգեւորականը: Ո՛չ բուռն օվացիաներ ու «ավե՜, ցեզար», ո՛չ հրավառություններ ու կերուխում: Տրիումֆի մասին էլ չենք խոսում...

Մինչդեռ նոր «սահմանադիրը» կոմունիզմի ուրվականի պես աննկատ չեկավ՝ նա կյանք խուժեց շռնդալից, որպես նոր կյանքի ու նոր հարաբերությունների մանիֆեստ, նոր ճաճանչափայլ համարանիշով՝ 1: Ժամանակին, երբ դեռ նոր էր ստանձնել բարձրագույն պաշտոնը, պատուհանից դուրս էր նետել «ճռճռան» համարները, բայց ժամանակն ու կեցությունը նաեւ ճաշակ ու հայացքներ են փոխում: Չէ՞ որ մինչ այդ նա ընդամենը «իշխանություն» էր, հետո դարձավ «պետություն», իսկ այժմ երկրի միակ «սահմանադրությունն» է, որ մեզ առաջնորդում է դեպի նոր հորիզոններ...

Բայց ո՞ր երկրի Սահմանադրությունն է նա՝ Հայաստանի Հանրապետությա՞ն: Իհարկե՝ ոչ: Հիմա ոմանք գլուխ են կոտրում, թե ինչ անուն տան այս նոր երկրին: Գուցե կոչեն՝ Նազարստա՞ն: Գուցե՝ Նիկոլստա՞ն կամ էլ՝ Կիկոլստան... Հնչուն չէ՞: Եվ մեկն արդեն նոր կենսագրություն է հյուսում. «Նոր Սահմանադրությունը ծնվել է աննշան գյուղակի աննշան հյուղակում: Նախկինում Ենոքավան էր կոչվում: Հիմա գյուղակը նոր անուն ունի՝ Նիկոլավան, իսկ հյուղակը՝ թանգարանի համբավ: Դեռ ճշգրտված չեն ծնողների կենսագրությունները: Մեծացել է Իջեւանի զով հանդուչղերում, գրացել մայրաքաղաքի խուլ փողոցներում, տարբեր խմբագրություններում, բամբասանքների ու կոմպրոմատների խառնարանում... Հետո սին խոստումներով խաբել է խեղճ ժողովրդին ու բազմեց հայոց թագավորական ոսկեկուռ գահին... Մառախլապատ մի օր էլ թեթեւ SMS-ով իրեն հռչակեց նոր սահմանադրություն: Աննախադեպ երեւույթ պատմության մեջ: Անգամ աշխարհակալ Ալեքսանդր Մակեդոնացին ու Չինգիզ խանը չեն համարձակվել տիրակալ ինքնահռչակվել: Նրանց գահակալությունը հաստատել են ավագանու, դիադոխների միացյալ ժողովը, խանական կուրուլթայը (խորհուրդը): Այդկերպ նրանք փորձել են գոնե լեգիտիմության պատրանք ստեղծել: Մեր նոր «սահմանադրությունը» մանկամիտ խաղերի կարիքը չունի: Նա «առաքինության» քողն իր վրա քաշեց ինքնակամ: Թքած, որ դա կոչվում է իշխանության օկուպացում:

Բռնազավթը հերթական ճակատամարտը տանուլ տվեց: Պալատ վերադարձի ճանապարհին նրա աչքն ընկավ գողեգող հեռանալ կամեցող հին սահմանադրությունը: Միահեծանը զայրույթը պարպեց նրա վրա՝ պիտի բռներ կոկորդից, բայց հին սահմանադրությունը խույս տվեց ու... արժանապատվությամբ՝ ինքնասպան եղավ 7-8 կրակոցով: Տարան թաղեցին: Որտե՞ղ թաղեցին: Ի՞նչ կարեւոր է: Ասենք ՝ Ջհանդամդարասիում... Էակա՞ն է: Կարեւորն այն է, որ հողի հաստ շերտի տակ կոխեցին, որ չտեսնի արեւը երկրի: Չկա՛: Չի եղել...

Արցունք թափելու կարիք, իհարկե, չկա: Հինը մահացավ՝ կեցցե՜ նորը: Կհետաքրքրվեք՝ իսկ ի՞նչ է գրված նոր սահմանադրությունում: Նայեք նրա ճակատին, դուք որեւէ բան տեսնո՞ւմ եք: Անքննելի են գործերը նոր սահմանադրության: Մաքուր թղթեր, դատարկ էջեր: Ասում են՝ մի պատգամ է միայն գրված. «Չոկ սաղոլ (շատ ապրես), կարդաշ, առաջ ու առաջ, առա՜ջ՝ անհառաչ, քամուն ընդառաջ»: Արեւմուտքը կմիանա՞ այս կոչին... Մի կասկածեք՝ կմիանա:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am